ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ. ՆՈՐ ՍԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ, ՀԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Թամարա Վարդանյան

«Նորավանք» ԳԿՀ-ն, կարևորելով թիֆլիսահայ համայնքի[1] անվտանգության, հայապահպանության արդի հիմնախնդիրները, 2006թ. ապրիլ-մայիս ամիսներին կազմակերպել և իրականացրել է դաշտային հետազոտություն։ Անցկացվել են անհատական ֆոկուսային 24 հարցազրույցներ Թբիլիսիում գործող հայկական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների և մի քանի հեղինակավոր հայ հասարակական գործիչների հետ։

Սույն հետազոտությունում քննարկվում են Թբիլիսիի հայկական միջավայրի որոշ առանձնահատկություններ, բացահայտվում են հասարակական ակտիվության առկա դրսևորումներն ու ձևաչափերը, ինչպես նաև փորձ է արվում գնահատելու տեղի հայության ազգային ներուժը հայապահպան խնդիրների համատեքստում։

Ներածություն

Անկախացումից ի վեր բազմէթնիկ Վրաստանը թևակոխում է պետականության կերտման նոր փուլ։ Այն, ի թիվս այլ միտումների, նշանավորվում է էթնիկ կառուցվածքում որոշակի փոփոխություններով՝ երկիրը օր օրի դառնում է առավել միատարր։ Եթե 1989թ. մարդահամարով վրացիները կազմում էին Վրաստանի բնակչության 70%-ը, ապա 2002թ.՝ արդեն 83,3 %։

[1] Հայերը վաղուց ի վեր կազմել են Թիֆլիսի բնակչության զգալի հատվածը։ Հայերի թիվը մասնավորապես աճեց արաբական տիրապետության տարիներին։ 11-12-րդ դդ. Դավիթ Շինարարի եռանդուն գործունեության շնորհիվ հզորացած Վրաստանում ապաստան գտան մեծ թվով հայեր։ Վրաց թագավորը սիրով ընդունում էր հատկապես հայ առևտրականներին ու արհեստավորներին։ Արքունիքը նրանց բնակեցնում էր թագավորական տիրույթներում՝ խոշոր քաղաքներում, մասնավորապես Թիֆլիսում՝ հյուսիսային առևտրական մայրուղիների աշխուժացմանը և քաղաքային արհեստների զարգացմանը նպաստելու նպատակով։ Իրենց հերթին՝ վրաց հողատեր-կալվածատերերը շահագրգռված էին Թիֆլիսի արվարձաններում բնակեցնելու հայ գյուղացի հողագործներին [տե՛ս 1, c. 8-11]։ Ներկայումս Վրաստանում բնակվում է մոտ 250.000 հայ, ոչ պաշտոնական աղբյուրները նշում են մինչև 460.000։ Ինչպես և անցյալում, այսօր էլ հայերի զգալի մասը՝ մոտ 150.000, կենտրոնացած է Թբիլիսիում, որտեղ մի շարք թաղամասերում (Հավլաբար, Վազիսուբանի, Գլդանի, Վարկեթիլի և այլն) բնակվում է կոմպակտ [2, էջ 541]։ Հայերի թիվը վերջին տարիներին նկատելիորեն նվազել է։ Եթե 1989թ. մարդահամարով հայերը կազմում էին Վրաստանի բնակչության 8 %-ը, ապա 2002թ.՝ 5.7%-ը։

Երկրի բնակչությունը կանգնած էր բազմաթիվ մարտահրավերների առջև. վրացական իշխանությունների անթաքույց ձգտումներն՝ օր առաջ ազատվել խորհրդային կաղապարներից մի կողմից, մյուս կողմից՝ նախկին համակարգի փլատակների վրա ձևավորվող նոր տիպի սոցիալ-տնտեսական հարաբերությունները, երրորդ կողմից՝ բազմէթնիկ հասարակությունն իր բարդ միջէթնիկ հարաբերություններով և այլն, երկրում ձևավորեցին նոր իրադրություն: Նման շրջադարձային ու ճգնաժամային պահերին հասարակության ներսում տեղի է ունենում հասարակական բջիջների փոքրացում: Դա կարող է լինել, օրինակ, անհատի հոգեբանական ինքնամեկուսացումն իր ընտանիքի սահմաններում (մեզանում այս մոդելն առավել տարածվածն է), նաև կոլեկտիվի կամ մասնագիտական խմբի շրջանակներում, իսկ բազմէթնիկ հասարակություններին բնորոշ են, որպես ինքնապաշտպանական բնազդի արտահայտություն, մեկուսացումը և պարփակումը էթնիկ սկզբունքով: Այս պարագայում առավել հաճախանում են նույն խմբի անդամների միջև միջանձնային կապերը, տեղեկատվության փոխանակումը, փոխօգնությունը, համատեղ մարտավարության կամ ռազմավարության մշակումը և այլն, այսինքն՝ ակտիվանում և սրվում է ինքնատարբերակման (ինքնաիդենտիֆիկացման) էթնիկ բաղադրիչը (կամ առավել հաճախ գոյություն ունեցող ինքնատարբերակման բաղադրիչի ակտիվացում, սրում): Սովորաբար, այդ ինքնամեկուսացված հանրույթն առանձնանում է նաև ներսում առկա բարձր փոխվստահության աստիճանով:

Էթնիկ սկզբունքով ինքնամեկուսացված հանրույթի ներսում աստիճանաբար սկսում են ակտիվանալ որոշակի (հաճախ դարերով փորձված) ինքնապաշտպանական մեխանիզմներ. այդ շրջանին բնորոշ են անընդհատ աճող հետաքրքրությունը պատմական անցյալի նկատմամբ, ազգային հերոսական էջերի վերհանումը, հերոսների փառաբանումը, ազգային մշակույթին, ավանդույթներին, ակունքներին վերադարձը, անընդհատ մտորումները տվյալ հասարակությունում իր տեղի ու դերի մասին և այլն: Այս երևույթները խթանում են ազգային մոբիլիզացիոն գործընթացները և նպաստում էթնիկ ազգայնականության դրսևորմանը: Էթնիկ հանրույթի ներսում բացահայտվում և ուրվագծվում են անցյալի վերաբերյալ «կոլեկտիվ հիշողության» բաղադրիչները, որոնք օգնում են նրան դիրքավորվել տվյալ բազմէթնիկ հասարակությունում: Ինչպես նշում է Յա. Զերուբավելը, «Ճոճանակի նման, կոլեկտիվ հիշողությունը գտնվում է անընդհատ շարժման մեջ. պատմական աղբյուրներից դեպի ժամանակակից հասարակական-քաղաքական խնդիրներ, ներկայից՝ հետ դեպի անցյալի վկայությունները՝ ձգտելով անընդհատ դրանք կապել իրար հետ» [3, c. 24]: Այսպիսով, անցյալից ժառանգած և ներկայում ակտիվացած «կոլեկտիվ հիշողությունը»

նոր իրադրությունում ազդում է միջէթնիկ հարաբերությունների վերաձևավորման գործընթացի վրա:

Թիֆլիսահայ համայնքում տիրող տրամադրությունները, հայ-վրացական հարաբերությունների բնույթը, շրջանառվող կարծրատիպերը թելադրում են էթնիկ վարքաբանության որոշակի մոդել, հասարակական ակտիվությունն ուղղորդում են որոշակի հունով՝ նաև ազդելով Հայաստան-Վրաստան միջպետական հարաբերությունների վրա:

1. Թիֆլիսահայ համայնքի որոշ առանձնահատկություններ

Թիֆլիսահայ համայնքը հայկական սփյուռքի ուրույն, հայության կյանքում պատմականորեն կարևոր դերակատարում ունեցող համայնքներից մեկն է:

Հատկանշական է, որ սփյուռքում որքան ուժեղ է ուծացման վտանգը, այնքան ուժգնանում են ինքնապաշտպանական բնազդները և հակառակը. եթե փոքրամասնությունն ապատիայի մեջ է (զգոն չէ), ապա ուծացման գործընթացներն առավել անկանխատեսելի հետևանքներ կարող են ունենալ: Այս խնդրում շատ կարևոր է դիտարկել թե՛ տիտղոսակիր ժողովրդի (տվյալ դեպքում՝ վրացիների) և թե՛ ազգային փոքրամասնության (հայերի) շրջանում ակտիվացող կոլեկտիվ հիշողության բաղադրիչները, որոնք կարող են ունենալ դրական և բացասական տարբեր ընկալումներ (դրական՝ «դաշնակից» - «դրացի» - «հավատակից» - «եղբայրակից» - «բախտակից», բացասական՝ «մրցակից» - «հակառակորդ» - «թշնամի» և այլն):

Նկատելի է, որ ժամանակակից փուլում վրացիների վերաբերմունքը հայության նկատմամբ որոշակիորեն պայմանավորված է ոչ միայն պատմական անցյալով և դրա մասին կոլեկտիվ հիշողությամբ, այլև դրան գումարվել է նաև Ղարաբաղյան պատերազմում հայերի տարած հաղթանակը՝ մի կողմից, և վրաց-աբխազական պատերազմում վրացիների կրած պարտությունը՝ մյուս կողմից: Այս երկու պատերազմները վրաց հասարակությանը ներարկել են որոշակի զգուշավորության զգացում հայերի նկատմամբ, որոնք ընկալվում են որպես տարածաշրջանի միակ հաղթող ազգը (ավելացնենք, որ վրացալեզու մի շարք հրապարակումներում վրաց-աբխազական պատերազմում վրացիների պարտությունը նույնպես պայմանավորվում է հայերի՝ աբխազների կողմում կռվելու հանգամանքով):

Միևնույն ժամանակ, Ղարաբաղյան պատերազմում տարած հաղթանակը, կարծես թե, խոր ազդեցություն չի գործել թիֆլիսահայության (ըստ մեր դաշտային նյութի) էթնիկ վարքաբանության վրա: Հաղթող հայի կերպարը թիֆլիսահայ միջավայրում համեմատաբար թույլ է արտահայտված:

Մյուս առանձնահատկությունն այն է, որ այստեղ թույլ են արտահայտված նաև պատմականորեն համայնական կյանքով ապրող ժողովուրդներին

(առաջին հերթին՝ հայերին) բնորոշ ինքնապաշտպանական մեխանիզմները (իմունիտետը)։ Սրա բացատրությունը, թերևս, պետք է փնտրել պատմության էջերում, օրինակ՝ ոչ այնքան հեռու անցյալում (մոտ 100 տարի առաջ), երբ հայկական տարրն ակտիվ ներգրավված էր Թիֆլիսի քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքում և թիֆլիսահայը Թիֆլիսը չէր դիտում որպես ժամանակավոր կացարան Մայր Հայրենիք վերադառնալու ճանապարհին։ Այս ընկալումը պահպանվել է մինչև օրս։

Սփյուռքում ապրող հայությանն ընդհանուր առմամբ բնորոշ է վիրտուալ հոգեբանական կապը Հայրենիքի հետ՝ Հայրենիքի տեսիլքը, թաքուն փայփայած հավատն առ այն, որ մի օր լինելու է *վերադարձ դեպի Հայրենիք։* Թբիլիսիի հայության միջավայրում այս սպասումը չի նկատվում, քանի որ Թիֆլիսն իր տունն է։ Ինչպես նշում են մեր զրուցակիցներից շատերը, *«մենք հյուր չենք այս տարածքում, ընդհակառակը, մենք միշտ եղել ենք, մենք ենք ուրիշներին ընդունել»* [4]։

Մյուս կողմից՝ Թբիլիսին այնքան մոտ է Հայաստանին, որ թիֆլիսահայության շրջանում անկախության այս 15 տարիների ընթացքում դեռևս չի ձևավորվել արտերկրում ապրողի գիտակցությունը, մեր զրուցակցի խոսքերով՝ *«մեզ միշտ թվացել է, թե մենք ապրում ենք երկու սենյականոց բնակարանում, ոչ մի հայի մտքով չէր անցնում, որ տեղափոխվելով Երևանից Թիֆլիս՝ ինքը հայտնվել է այլ երկրում։ Մեզ համար Վրաստանը Հայաստանի շարունակությունն է. և՛ այնտեղ է Հայաստան, և՛ այստեղ, և՛ այնտեղ հայեր կան, և՛ այստեղ։ Հիմա ամեն ինչ փոխվել է, բայց մենք դեռ չենք փոխվել»* [4]։

Այսօր թիֆլիսահայն ապրում է անմիջապես իր հայրենիքի հարևանությամբ գտնվող քրիստոնեական երկրում, որտեղ հայկական տարրի ներկայության մասին իրեն հիշեցնող բազում ապացույցներ կան. *«Մեզ մոտ չկա տրադիցիոն համայնքային ինքնագիտակցություն, ինչպես սփյուռքում դա կա։ Պատճառն այն է, որ Վրաստանում մենք չենք զգում, թե մենք տանը չենք, թիֆլիսահայերս զգում ենք Թիֆլիսը որպես մեր տունը, 90%-ի համար էս քաղաքը հայի սեփականությունն է, քանի որ ամեն ինչ հայն է ստեղծել, հայի շունչն այստեղ կա։ Այստեղ չի գործում սփյուռքին բնորոշ ինքնապահպանման որևէ մոդել»* [4]։

Այսպիսով, թիֆլիսահայն իրեն չի համարում սփյուռքում ապրող հայ, որն ինքնության պահպանման կարիք և անհրաժեշտություն ունի։

Այս առանձնահատկություններով է հիմնականում բացատրվում ինքնապաշտպանական ավանդական մեխանիզմների թույլ արտահայտվածությունը, և որպես հետևանք՝ կազմակերպված համայնքի բացակայությունը։

Փաստորեն, ստեղծված է մի իրավիճակ, երբ ներքին համայնական

կյանքում տիտղոսակիր ժողովրդի (վրացիների) և ազգային փոքրամասնության (հայերի) հարաբերություններում նկատվում է ոչ համարժեք փոխադարձ ընկալում: Մեր դիտարկումների համաձայն՝ վրացիների ընկալմամբ հայերը բավական ուժեղ ու կարող ազգ են: Հետևաբար, վրացիների կողմից հայկականության նկատմամբ մրցակցությունն առավել կազմակերպված, համակարգված ու հետևողական է: Փոխարենը՝ Թբիլիսիի հայկական միջավայրում (ինչը չի կարելի ասել Ջավախքի մասին) մրցելու, որոշակի սոցիալական բարձր տեղ զբաղեցնելու հավակնություններ գրեթե չեն դրսևորվում:

Ուծացման վտանգի թերագնահատումը հանգեցրել է նրան, որ այսօր մենք խոսում ենք արդեն հայ համայնքի աստիճանական անկման, նաև ոչ հեռու ապագայում՝ հնարավոր կորստի մասին:

Այսօր թիֆլիսահայ համայնական կյանքի կազմակերպումը, կարելի է ասել, ընթանում է տարերայնորեն և չի ղեկավարվում որևէ կենտրոնից՝ լինի համայնական կառույց, քաղաքական կուսակցություն (կամ կուսակցություններ), հասարակական կազմակերպություն, եկեղեցի, մշակույթի տուն, թե որևէ այլ օղակ: Իրականում այստեղ գործում են հայկական մշակութային, կրթական, հոգևոր և այլ կառույցներ (հայ քաղաքական կուսակցություններ չեն գործում), բայց համայնական կյանքի կազմակերպման «կենտրոնական իշխանություն» փաստորեն չկա: Թիֆլիսի հայ համայնքի ակտիվ անդամների հիմնական մտահոգությունն այն է, որ համայնքը պառակտված է տարբեր խմբավորումների, անհատների, կազմակերպությունների, խարխլված են ներքին միասնությունն ու համախմբվածությունը:

Ըստ Վրաստանի պետական քաղաքականության, նաև միջազգային կազմակերպությունների և հայության առաջադեմ հատվածի՝ թիֆլիսահայության ապագան պետք է լինի ինտեգրումը երկրում՝ քաղաքացիական հասարակության ձևավորման ճանապարհով: Դա համահունչ է գլոբալ զարգացումների ընդհանուր տրամաբանությանը:

Առկա է նաև այլ տեսակետ, որն այնքան էլ չի բարձրաձայնվում և ավելի շատ բնորոշ է ջավախահայությանը, քան թիֆլիսահայությանը. հայկականության շեշտադրում ինքնամեկուսացման որոշ տարրերով, ազգային ինքնաբավ համակարգի ստեղծում և սակավ շփումներ վրացական միջավայրում: Բայց այս երկրորդ ուղին համընթաց չէ գլոբալ «քամիներին»:

Թե ինչ ապագա կունենա թիֆլիսահայությունը, այսօր դժվար է կանխատեսել: Բայց պետք է շրջանառության մեջ դրվի հայրենադարձության գաղափարը նույնպես: Քանի որ թե՛ ինտեգրման, թե՛ մեկուսացման ուղիները զերծ չեն լուրջ մարտահրավերներից:

2. Մարտահրավերներ և ռեսուրսներ

Ներկայումս վրաց ժողովուրդը պատմական այս փուլում ունի, թերևս, ամենաառանցքային և կարևոր մի խնդիր՝ ազգային պետության ստեղծումը, որից էլ հիմնականում արտածվում են մնացյալ խնդիրները։ Այս խնդրի լուծման ճանապարհին վրաց ազգային էլիտան հասարակական լայն շրջանակներին թելադրում է այլազգիներին երկրի սոցիալ-տնտեսական, քաղաքական կառավարման համակարգից հետևողականորեն դուրս մղելու քաղաքականություն, որն, ըստ էության, հասել է գագաթնակետին։ Այսինքն՝ թեպետ իշխանությունները բարձրաձայնում են քաղաքացիական հասարակության կառուցման իրենց ցանկության ու պատրաստակամության մասին, բայց այդ գործընթացներին զուգահեռ՝ դրսևորվում է տիտղոսակիր ժողովրդի կողմից ազգային փոքրամասնությունների նկատմամբ անթաքույց խտրականություն։

Այսպիսով, անկախացումից ի վեր ակտիվորեն ընթանում են երկու զուգահեռ, բայց հակադիր գործընթացներ.

- վրացական էլիտայի կողմից երկրի կառավարման համակարգից ազգային փոքրամասնությունների դուրսմղմանը նպատակաուղղված քաղաքականություն,
- միջազգային ուժերի կողմից Վրաստանին ժամանակակից գլոբալացվող աշխարհի տրամաբանությանը համընթաց քայլելու, քաղաքացիական հասարակություն ձևավորելու պարտադրանք և ազգային փոքրամասնությունների ձգտում՝ օգտվել «խաղի նոր կանոնների» ընձեռած հնարավորություններից։

Առաջին գործընթացը լուրջ վտանգներ է պարունակում հայապահպանության համար, իսկ երկրորդը, հակառակը, կարելի է ընկալել որպես ռեսուրս նույն հիմնախնդիրների համատեքստում։ Մինչև վերջերս առաջին գործընթացն իր դինամիկայով այնքան ուժգին էր, որ արդեն կարող ենք խոսել դրա արդյունքների մասին, այսինքն՝ ազգային փոքրամասնությունները գրեթե ամբողջովին դուրս են մղված երկրի կառավարման համակարգից։

Այժմ ոչ պաշտոնական տվյալների համաձայն՝ պետական համակարգում հայերի թիվը 1-2%-ից չի անցնում։ Հայերն ունեն 5 պատգամավոր Վրաստանի Ազգային ժողովում, էներգետիկայի փոխնախարար, իսկ նախարարություններում և գերատեսչություններում հայերի գրեթե չենք հանդիպի։ Վրացական կողմը նման իրավիճակը բացատրում է հայերի՝ իբր պետական լեզվի չիմացությամբ (Ջավախքի դեպքում միգուցե կարելի է նման պատճառաբանություն հրամցնել, թեպետ դա էլ առանձին քննարկման կարիք ունի), բայց Թբիլիսիի հայության մեծ մասը լեզվին տիրապե-

տում է: Մեր զրուցակիցների կարծիքով՝ այս իրավիճակի հիմնական պատճառը հայկական ազգանուններն են: Դա վերաբերում է հիմնականում պետական սեկտորին: Ինչ վերաբերում է մասնավորին, ապա *«այստեղ հայերին ընդունում են աշխատանքի, եթե համապատասխանում է մասնագիտական պահանջներին, բայց նույն աշխատանքի դիմաց հային վարձատրում են ավելի քիչ, քան վրացի մասնագետին»*,- նշում է մեր զրուցակիցը [4]:

Այժմ արդեն իրավիճակն այնպիսին է, որ տեղի հայության կողմից մեծ ջանքեր կպահանջվեն Վրաստանի մայրաքաղաքում երբեմնի սոցիալ-տնտեսական, քաղաքական դիրքերը վերականգնելու համար:

Այս գործընթացներն ուղեկցվում են Վրաստանի մայրաքաղաքում հայերի ներկայության անհեռանկարային լինելու մասին իշխող համատարած տրամադրություններով:

3. Թիֆլիսի հայկական ՀԿ-ները. հին խնդիրների լուծման նոր հնարավորություններ

Բայց և այնպես, վերջին 2-3 տարիներին համայնքում նկատելի են հասարակական ակտիվության նոր տիպի դրսևորումներ՝ հիմնականում հասարակական կազմակերպությունների ձևաչափով:

Մինչ այդ հայերի շրջանում համայնքային ակտիվությունը դանդաղ անկում էր ապրում, թեպետ այդ ընթացքում էլ եղել են առանձին ակտիվության դրսևորումներ, որոնք, այդուհանդերձ, օրինաչափություն չէին: Օրինակ, 1995թ. համայնքը մեծ աղմուկ բարձրացրեց, երբ վրացական կողմը փորձում էր «յուրացնել» Նորաշեն հայկական եկեղեցին (մինչև օրս այս հարցը երկու կողմերի միջև լուծված չէ):

Համայնքում ազգային զարթոնքի դրսևորումները բացատրվում են ոչ թե վրացական իշխանությունների «մեղմ» քաղաքականությամբ, այլ առավելապես նրանով, որ տեղի հայությանը սպառնում է որպես հայ այդ տարածքում «լինել–չլինելու» վտանգը: Մեր զրուցակիցներից մեկն ասաց, որ *«ամբողջ աշխարհից Հայաստանին օգնություն է գալիս, Հայաստանը դրանք բաշխում է, բայց Հայաստանը, վերջապես, պետք է որոշի՝ Վրաստանի համայնքը պահի, թե ոչ»:* Իսկ հայկական դպրոցների փակման վտանգը քննարկելիս (մանրամասն տե՛ս ստորև) մեկ ուրիշն ասաց. *«Հայկական դպրոցները փրկելն ուշ է»:*

Այսինքն՝ դրված է համայնքի գոյության հարցը, և այս գերխնդիրը լուծելու համար, տարիների բացթողումների արդյունքում, այժմ արդեն ուժերի գերլարում է պահանջվում:

Վրաստանի Հանրապետությունում պաշտոնապես գրանցված են 67 հայկական ՀԿ-ներ (հայկական ենք համարում այն ՀԿ-ները, որոնք իրենց

անվանման մեջ ունեն «հայ», «հայերի» կամ «հայկական» բառերը)։ Դրանց երեք տասնյակից ավելին գործում են միայն Թբիլիսիում։

Թեպետ իրականում ակտիվորեն գործում են գրանցված ՀԿ-ներից մի քանիսը, բայց և այնպես, Վրաստանի մյուս ազգային փոքրամասնությունների շարքում ամենաակտիվը և քանակապես գերազանցողը հայկական ՀԿ-ներն ու ՀԿ առանձին գործիչներն են (տե՛ս *Աղյուսակ 1)*։

Աղյուսակ 1

Վրաստանում գրանցված ազգային փոքրամասնությունների ՀԿ-ները (ոչ պաշտոնական տվյալներ)

Հայկա-կան	Ադրբե-ջանական	Օսա-կան	Ռուսա-կան	Հրեա-կան	Լիտվա-կան	Եզդիա-կան	Չեչե-նական
67	20	20	15	10	6	5	4

Այսպես. առաջին ազգային երիտասարդական կազմակերպությունը ստեղծել են հայերը 1996թ.՝ «Վրաստանի հայ երիտասարդական միություն» անունով, որի օրինակով հետագայում նմանատիպ կազմակերպություններ են հիմնել ադրբեջանցիները, հույները, ասորիները, ռուսները և այլն։ Ընդհանրապես, ասում են, որ մյուս ազգային փոքրամասնությունները սպասողական դիրք են գրավում և հետևում հայերի որդեգրած մարտավարությանը։

Թերևս պատճառն այն է, որ հայերը նախ Վրաստանի ամենամեծաթիվ ազգային փոքրամասնությունն են, շեշտում են Վրաստանում պետականաստեղծ ազգ լինելու հանգամանքը, քանի որ համայնքը բաղկացած է բնիկ հայերից և եկվորներից (հիմնականում՝ Թուրքիայից, 19-րդ դ. վերջին՝ աբդուլհամիդյան ջարդերի և 1915թ. ցեղասպանության հետևանքով)։ Հայերը նաև աչքի են ընկնում համեմատաբար ավելի բարձր կազմակերպվածությամբ, քան մյուս փոքրամասնությունները։ Չնայած մեր զրուցակիցներից ոմանք նշում են, թե Թբիլիսիի հրեական համայնքն առավել կազմակերպված է գործում, բայց իրականում հայկական տարրի ներկայությունը Թբիլիսիի միջէթնիկ միջավայրում շարունակում է մնալ ամենաառանցքայինը։

Միաժամանակ, բացի զուտ հայկականից, գործում են ազգային փոքրամասնությունների հիմնախնդիրներով զբաղվող բազմաթիվ այլ ՀԿ-ներ։ Թեպետ մենք այդ ՀԿ-ները հայկական չենք համարում, այնուամենայնիվ, ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունն ընդհանուր առմամբ նույնպես այս կամ այն կերպ առնչվում է տեղի հայության հիմնախնդիրներին։ Հատկանշական է, որ գործունեության այս ուղղվածությունը համապատասխանում է ժամանակակից աշխարհում ունիվերսալ արժեքներ արտահանող երկրների կամ ուժի կենտրոնների հռչակած սկզբունքներին, որոնցից այստեղ առավել ակտիվ գործում են Եվրախոր-

հուրդն ու ԵԱՀԿ-ն: Նշված և այլ կառույցների ռազմավարությունն էլ իր հերթին զգալիորեն նպաստել է Վրաստանում, ինչպես և հետխորհրդային տարածքի բազմաթիվ այլ հանրապետություններում այս խնդրով զբաղվող ՀԿ-ների ստեղծմանն ու կայացմանը:

Այսպիսով, կարելի է փաստել, որ Թբիլիսիի ընդհանուր ՀԿ դաշտում հայկական ՀԿ-ներն իրենց ուրույն տեղն են զբաղեցնում Վրաստանում ձևավորվող ՀԿ հանրույթում:

Թեպետ վաղ է խոսել Թբիլիսիում զուտ հայկական ՀԿ-ների «ցանցային հանրույթի» գոյության մասին, այնուամենայնիվ, ակտիվ գործող հայկական ՀԿ-ները կարելի է դիտարկել որպես Թբիլիսիում հայկական ոգու վերականգնման, պահպանման ու զարգացման սաղմնային բջիջներ՝ հայապահպանության նոր, ժամանակակից տիպի համայնքային կառույցներ, ազգապահպան ավանդական մեխանիզմներին զուգահեռ գործող օղակներ:

Ընդհանրապես, սփյուռքում գործող հայկական ՀԿ-ների հետաքրքիր առանձնահատկություններից մեկն այն է, որ դրանք, դասական ՀԿ-ներին բնորոշ գործունեությունից զատ, նաև իրականացնում են համայնքային կյանքի կազմակերպման, այսինքն՝ ազգապահպանման գործառույթ: Այս է պատճառը, որ մեր կարծիքով՝ ՀՀ-ում գործող համապատասխան պետական կառույցներն առավել մեծ ուշադրություն պետք է դարձնեն այս կազմակերպություններին, իրականացնեն համատեղ ծրագրեր և գործնական հետևողական աշխատանքներ (մանրամասն տե՛ս *«Առաջարկություններ»* բաժնում):

Թբիլիսիի հայկական ՀԿ-ների ակտիվ գործունեության համար գոյություն ունեն բազմաթիվ խնդիրներ և դժվարություններ: Այդ խնդիրների մի մասն օբյեկտիվ է, քանի որ նման դժվարություններ ունեն թե՛ ՀՀ-ում, թե՛ Վրաստանում գործող ՀԿ-ները:

Ուսումնասիրված ՀԿ-ները էական ռեսուրս են, բայց նրանց գործունեությունը գտնվում է սաղմնային փուլում: Նրանց գոյությանը կամ գործունեությանը ծանոթ է հիմնականում հայության այն հատվածը, որը հասարակական ակտիվություն է ցուցաբերում համայնական կյանքում: Հայության պասիվ և մեծաթիվ հատվածը, որը զբաղված է առօրյա հոգսերով և կենցաղի կազմակերպմամբ, հաճախ անտարբեր է հայերի ակտիվության դրսևորումների նկատմամբ, իսկ առավել հաճախ՝ ուղղակի անտեղյակ է: Փաստորեն, թիֆլիսահայության մի ստվար զանգված քաղաքականապես ակտիվ չէ, ինտեգրված չէ ոչ միայն համայնքի ներքին կյանքին, այլև հանրապետության ներսում ընթացող անցուդարձին: Արդյունքում՝ տեղի հայկական ՀԿ-ների կապը հայ հասարակական լայն շրջանակների հետ դեռևս շարունակում է մնալ թույլ:

Պատճառները հետևյալն են.

- Քաղաքացիական հասարակությունը դեռևս կայացման փուլում է գտնվում, հետևաբար ՀԿ-հասարակություն կապը սերտ չէ ընդհանուր առմամբ տարածաշրջանի բոլոր երկրներում։
- Թբիլիսիի հայկական ՀԿ-ների գործունեության մասին վրացական ԶԼՄ-ն շահագրգռված չեն տեղեկատվություն տարածելու մեջ։ Հուսալ, թե Վրաստանի ընդհանուր տեղեկատվական դաշտի միջոցով կարելի է ձևավորել այդ կապը՝ գրեթե անիմաստ է։ Հայկական ՀԿ-ները վերջին շրջանում արդեն քայլեր են ձեռնարկում իրենց գործունեությանը հասարակական հնչեղություն հաղորդելու ուղղությամբ (թերթի հրատարակում, կայքի ստեղծում), բայց այս գործունեությունը նույնպես դեռևս սաղմնային փուլում է։
- Հայկական ՀԿ-ները շոշափելի ֆինանսական աղբյուրներ չունեն, միջազգային կազմակերպություններից դրամաշնորհներ գրեթե չեն ստանում, առավել ևս չեն օգտվում գոյություն ունեցող պետական ֆինանսավորման աղբյուրներից, օրինակ՝ մշակույթի նախարարության երիտասարդության հարցերով դեպարտամենտի ամենամյա դրամաշնորհներից։
- Տեղի հայության կյանքի սոցիալ-տնտեսական դժվարությունները, նրանց ցածր ներգրավվածությունը երկրի ներքաղաքական կյանքում ստեղծում են անկլավային իրավիճակ, հոգեբանական մեկուսացում, ինչը հանգեցնում է սեփական ճակատագրի հանդեպ անտարբերության խորացմանը, քաղաքացիական պասիվությանը, կենցաղային խնդիրների շրջանակներում պարփակմանը, այս երկրում իր և իր երեխաների համար ապագայի հանդեպ մռայլ կանխատեսումների և սրանից բխող բազմաթիվ բացասական հետևանքների, այդ թվում նաև՝ ուղղակի արտագաղթի։

Այդուհանդերձ, հայկական ՀԿ դաշտում նոր միտումներ նկատելի են։ Սկզբնական փուլում (1995-2002թթ.) այստեղ ձևավորված հայկական ՀԿ-ները հիմնականում մշակութային ուղղվածության միջոցառումներ էին իրականացնում՝ գեղեցկության մրցույթներ, «Ուրախների և հնարամիտների ակումբի» խաղեր, երիտասարդական ժամանցային տարբեր միջոցառումներ, դիսկոտեկներ, ինտելեկտուալ խաղեր, օլիմպիադաներ, համերգներ, նաև կազմակերպում և անցկացնում էին եկեղեցական տոներ և այլն։ Այսինքն՝ նման միջոցառումների շնորհիվ աստիճանաբար սկսել է ձևավորվել դաշտ, որտեղ հայ երիտասարդների միջև հնարավոր են դարձել փոխշփումը, մտքերի փոխանակումը, առաջ են քաշվում գաղափարներ,

տեղի են ունենում քննարկումներ և այլն: Սա շատ կարևոր փուլ է ոչ միայն ՀԿ-ների կայացման, այլև ընդհանուր համայնքի կյանքի աշխուժացման համար: Այս փուլը կարելի է համարել համայնքի հասարակական ակտիվիստների նոր սերնդի ձևավորման փուլ:

2002-2003թթ. նոր միտումներ են նկատվում. ՀԿ-ների քանակական աճն արդեն զուգորդվում է նրանց գաղափարականացմամբ: Այս փուլում ՀԿ-ների գործունեության մեջ շարունակում է գերիշխել մշակութային ուղղվածությունը, բայց և զուգահեռ անցկացվում են քաղաքական ակցիաներ. օրինակ՝ ցեղասպանությանը նվիրված միջոցառումներ, այդ թվում՝ թուրքական դեսպանատան առջև նստացույց, Ջավախքում տիրող իրավիճակին նվիրված տարբեր հանդիպումներ, ելույթներ, գնահատականներ, հռչակագրերի ընդունում և այլն: Այսինքն՝ հայկական ՀԿ դաշտն աստիճանաբար և արդեն բավական ակտիվորեն ներգրավվում է համահայկական հիմնախնդիրների հորձանուտ՝ ոչ միայն սահմանափակվելով Թբիլիսիի հայկական համայնքին հուզող հարցերով, այլև փորձում է իր ներուժը միավորել և ներդնել համայն հայության շահերի առաջմղմանը:

Այս առանձնահատկությունները լուրջ նախադրյալներ են ստեղծում համայնքի վերազարթոնքի, վերակազմակերպման, հայ-վրացական հարաբերություններում իր դերի վերագնահատման և վերիմաստավորման համար:

Մարտավարությունը. Ընդհանուր տպավորությունն այն է, որ Թբիլիսիի հայկական գրեթե բոլոր ՀԿ-ները կենտրոնացած են հայկական հիմնախնդիրների վրա՝ միաժամանակ հմտորեն օգտագործելով ժամանակակից գլոբալացվող աշխարհում ընդունելի և «մոդայիկ» սկզբունքներն ու գործելաոճը: Գործունեության այս մարտավարությունն, անկասկած, առավել արդյունավետ է և կարող է դրականորեն ազդել նաև համայնքի ներքին կյանքի արդյունավետ կազմակերպման վրա:

Հայկականության օջախները (ինչպես ՀԿ-ներ, այնպես էլ առանձին անհատներ) պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ ըստ գործունեության մարտավարության.

- լիբերալ-չափավոր գաղափարաբանությանը և մարտավարությանը հարող անհատներ կամ ՀԿ-ներ, որոնք առավելապես փորձում են արդյունավետ համագործակցել միջազգային կառույցների հետ,
- առավել ազգայնական անհատներ կամ ՀԿ-ներ, որոնք հիմնականում ձգտում են համագործակցել ՀՀ-ում և սփյուռքում գործող կառույցների հետ, միաժամանակ քիչ հավանական են համարում միջազգային կառույցների հետ իրենց համագործակցության հնարավորությունը,
- զուտ մշակութային, բայց ազգային հենքով գործող ՀԿ-ներ կամ ան-

հատներ, որոնք հիմնականում գործում են տեղի սուղ միջոցների հաշվին (եկեղեցի, ՀՀ-ից աջակցություն, երբեմն անհատական նվիրատվություն, նաև հազվադեպ միջազգային կառույցներ),

- հայկական հիմնախնդիրներին հետամուտ (ի պաշտոնե կամ ուղղակի ազգի հանդեպ ունեցած պարտքի զգացումից կամ երկուսը միասին) առանձին սակավաթիվ հայ պաշտոնյաներ, որոնք նաև փորձում են արդյունավետ համագործակցել վրացական իշխանությունների հետ:

Անշուշտ, այս բաժանումը կարող է միայն պայմանական լինել, և հնարավոր են տարբեր չափորոշիչներով այլ դասակարգումներ ևս: Նաև նշենք, որ նման դասակարգումն ամենևին էլ չի նշանակում, թե այս կամ այն խմբում հայտնված ՀԿ-ն կամ անհատը չի կարող լինել միաժամանակ այլ խմբի մարտավարության կրող: Օրինակ՝ տեսականորեն և գործնականում էլ հնարավոր է հայկական հիմնահարցերը լուծելիս փորձել համագործակցել թե՛ վրացական իշխանությունների, թե՛ միջազգային կազմակերպությունների, թե՛ ՀՀ-ում և սփյուռքում գործող կառույցների հետ, և հենվել համայնքի ներքին ռեսուրսների վրա: Դա մեծապես կախված է սուբյեկտիվ գործոններից (անհատական կարողություններ, ունակություններ, փորձ, անձնական կապեր ներսում և դրսում, հասարակական աջակցություն և այլն):

Ինչպես վերը նշվեց, ընդհանուր առմամբ, բոլոր խմբերն էլ, անկախ որդեգրած մարտավարությունից, հետևողական են հայկական հիմնախնդիրների նկատմամբ: Վերջին շրջանում, հատկապես այսպես կոչված «վարդերի հեղափոխությունից» հետո, երբ արդեն իսկ նկատելի է Վրաստանի նոր կառավարության անընդհատ աճող անհանդուրժողականությունը ազգային փոքրամասնությունների նկատմամբ, ի պատասխան հայ ինքնությանը նետված նոր մարտահրավերների, նկատելի են երկու հակադիր զարգացումներ. մի կողմից՝ ներազգային համախմբման, մյուս կողմից՝ արդեն հայությունից օտարված հատվածի ուծացման տեմպերի ուժգնացում:

4. Հայկականության պահպանման ավանդական կղզյակներ

Դպրոց. Հայության հասարակական դիրքերի թուլացմանը զուգընթաց՝ լուրջ խնդիրներ են առաջացել կրթության բնագավառում:

Թբիլիսիի հայկական համայնքի ազգապահպանման խնդիրը մեծապես պայմանավորված է առաջին հերթին հայկական դպրոցների անխափան գործունեությամբ: Իրապես, եթե չլինի հայկական դպրոցը, հայկական թատրոնը կկորցնի իր հանդիսատեսին, հայերեն հրատարակվող թերթը՝ իր ընթերցողին, Հայ Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմը՝ իր հավա-

տացյալին, բուհական համակարգում գործող միակ հայկական ամբիոնը՝ իր դիմորդին: Թբիլիսիում ապրող հայերի թիվը հասնում է մոտ 150 հազարի, և քաղաքում գործում է ընդամենը 8 դպրոց[1]: Ներկայումս այդ 8 դպրոցներից 6-ը փակման վտանգի առջև են կանգնած: Այդ վտանգն առավել քան իրական է, քանի որ Վրաստանի կառավարությունը հանրակրթության ոլորտում անցնում է, այսպես կոչված, վաուչերային համակարգի: Այս «բարեփոխումը» ենթադրում է, որ բոլոր այն դպրոցները, որտեղ աշակերտների թիվը 700-800-ից պակաս է, մեխանիկորեն պետք է փակվեն, քանի որ պետությունն ի վիճակի չէ սուբսիդավորել դրանք: Նշված 8 դպրոցներում սովորող հայ աշակերտների թիվը միասին վերցրած կազմում է մոտ 700 աշակերտ: Այդ դպրոցներից միայն երկուսն են (95-րդը և 104-րդը) ամբողջությամբ հայկական, իսկ մնացածն ունեն հայկական սեկտոր, որը գործում է ռուսական և վրացական սեկտորներին զուգահեռ:

Ինչպես նշում է Վրաստանում ՀՀ դեսպան Հ.Միլվանյանը, «Թբիլիսիում հայկական դպրոց հաճախում է յուրաքանչյուր քառասուներորդ հայ սովորողը, մյուսները տարակենտրոնացված են ռուսական և վրացական դպրոցական հիմնարկներում» [5]: Այսօր փակման վտանգի տակ է արդեն թիվ 93 դպրոցը, որը ժամանակին խոշոր հայկական դպրոցներից է եղել, գտնվում է հայաշատ թաղամասում՝ Հավլաբարում: Դպրոցի հայկական սեկտորում այժմ սովորում են ընդամենը 60 աշակերտ (ռուսականում՝ 340): Ընդ որում՝ ռուսական սեկտորի աշակերտների ճնշող մեծամասնությունը հայեր են: Զուգահեռ՝ դպրոցի ներսում գործում է նաև վրացական սեկտոր՝ նախկին 98-րդ վրացական դպրոցի սաները, ովքեր տեղափոխվել են այս դպրոց: 98-րդ վրացական դպրոցը հրդեհի պատճառով մասամբ այրվել էր: Տեղի հայության շրջանում կարծիք կա, թե այն հրդեհվել է միտումնավոր, որպեսզի վրացի աշակերտներին տեղափոխեն հարևանությամբ գտնվող 93-րդ հայկական դպրոց, ինչը կնպաստի վերջինիս վրացականացմանը: Կարծիք կա նաև, թե դպրոցի շենքի հրդեհմամբ լուծվել է նաև մեկ այլ նեղ անձնական խնդիր. այն, որ շենքը հետագայում որևէ մեկը կարող է գնել որպես անհատական սեփականություն:

Հայերը հիմնականում հաճախում են ռուսական դպրոցներ: Դրանցում սովորողների մոտ 90%-ը, իսկ ուսուցիչների 75-80%-ը հայեր են: Տարեցտարի ավելանում է վրացական դպրոցներում ազգությամբ հայ աշակերտների թիվը, որն այսօր արդեն հասնում է մոտ 15 %-ի:

Ներկայումս համայնքում շրջանառվում է այն կարծիքը, թե հայկական

[1] Համեմատության համար նշենք, որ Ստամբուլում գործում են 17 հայկական վարժարաններ, այն դեպքում, երբ տեղի հայության թիվը կազմում է մոտ 70 հազար: Բացի այդ, բոլոր հայաշատ թաղամասերում գործում են հայկական նախակրթարաններ [2, էջ 181]:

դպրոցների փակումն արդարացված է: Ծնողները, մտահոգված իրենց երեխաների ապագայով, խուսափում են նրանց հայկական դպրոց ուղարկել՝ պատճառաբանելով, որ հայկական դպրոցներն ի վիճակի չեն ապահովել իրենց երեխայի՝ Վրաստանի լիիրավ քաղաքացի լինելու և ներքին կյանքին ինտեգրվելու հեռանկարը: Մեր զրուցակիցների կարծիքով՝ Թիֆլիսի հայկական դպրոցները փրկելու ջանքերն արդեն ուշացած են, և գործընթացն անդառնալի հետևանքներ կունենա հայապահպանության առումով:

Ընդհանրապես, հայկական դպրոցների վերաբերյալ այսօր առկա է հիմնականում երկու մոտեցում.

Առաջինը (որը նաև Վրաստանի կառավարության՝ ի դեմս կրթության նախարարության, տեսակետն է)՝ փակել 8 հայկական դպրոցները, փոխարենը թողնել միայն քաղաքի կենտրոնում գտնվող 2 դպրոց՝ 95-րդը և 104-րդը: Այս մոտեցման կողմնակիցները, որպես դրա դրական կողմ, նշում են, որ ավելի լավ է 8 վատի փոխարեն ունենալ երկու բարձրակարգ ժամանակակից դպրոց: Գտնում են, որ պետք է քայլեր ձեռնարկվի նշված 2 հայկական դպրոցներում հանրակրթության որակի բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացման, վրացերենի դասավանդման որակի բարելավման ուղղությամբ (օրինակ՝ երկլեզու կրթության համակարգի ներդրում, որը կիրառվում է մի շարք եվրոպական երկրներում, ուր բնակվում են ազգային փոքրամասնություններ) և այլն: Այս մոտեցման կողմնակիցները գտնում են, որ նման ձևով կարելի է կասեցնել թիֆլիսահայերի օրեցօր աճող արտագաղթը: Գտնում են, որ պետք է ներշնչվել և ոգևորվել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի պատմական օրինակով, որտեղ ուսանելը արտասահմանցիների համար մեծ պատիվ էր[1]. *«Երբ Ներսես կաթողիկոսը Ներսիսյան դպրոցը ստեղծեց, թիֆլիսահայերի 80%-ը հայերեն չէր խոսում, բայց նա դպրոցը հզորացրեց, որ բոլորը ավտոմատ գնացին էդ դպրոց: Եթե լավ դպրոց լինի, ծնողները կտեսնեն, որ հեռանկար կա»* [4]:

Այս մոտեցման և դրա հիմքում ընկած ծրագրի իրականացման դեպքում վտանգ կա, որ քաղաքի մյուս հատվածներում գտնվող 6 դպրոցների հայկական սեկտորների աշակերտները կնախընտրեն տեղափոխվել իրենց բնակավայրին մոտ գտնվող ռուսական կամ վրացական դպրոցներ: Այսպիսով, հայ աշակերտների թիվը կնվազի և կսահմանափակվի միայն այդ երկու դպրոց հաճախող աշակերտներով, որոնք բնակվում են մոտակայքում:

Երկրորդն ավանդական մոտեցում է՝ ամեն գնով աշխատել պահել

[1] «Նորաշեն» հանդեսը գրում է. «Ժամանակին այս կրթօջախը (իմա՝ Ներսիսյան դպրոցը– *Թ.Վ.)* ռահվիրայի դերակատարություն է ունեցել և իր նկարագրով հանձնառու հայոց դարբնոց դարձել: Այն արժանի զավակներ է կերտել ոչ միայն հայոց ազգի, այլև այն երկրի, ուր ապրել են այդ զավակները… Եվ ո՞ւմ մտքով կանցներ, որ ընդամենը մեկ դար անց հայը պետք է խուսափեր հայոց դպրոցից, երեխային իր ազգայինով դաստիարակելուց: Ինչո՞ւ ենք փախչում աստվածաշնորհ մեր պարտականություններից» [6]:

բոլոր 8 դպրոցները: Այս մոտեցման կողմնակիցները գտնում են, որ անիմաստ է սպասել Վրաստանի կառավարության աջակցությանը, միայն Հայաստանն է, որ կարող է միջամտել և ուղղակի ֆինանսավորել այդ դպրոցները: Անշուշտ, այս մոտեցման կողմնակիցների բանակը մեծ է. նրանց թվում են հիմնականում փակման ենթակա հայկական դպրոցների ուսուցիչները, որոնց մեծ մասը գործազրկության կմատնվի, բուհական համակարգում գործող միակ՝ հայոց լեզվի և գրականության բաժնի աշխատակազմը, որը կզրկվի առանց այն էլ տարեցտարի քանակապես նվազող դիմորդներից և այլն:

Այս նոր ուսումնական տարում նշված 8 դպրոցները շարունակում են իրենց կրթական առաքելությունը, բայց մի քանի դպրոցներում իրականացվել է հետևյալ ծրագիրը. ձևավորվել են, այսպես կոչված, կոմպլեկտ դասարաններ: Այսինքն, երբ միավորվում են մի քանի դասարաններ (օրինակ՝ 1-ին և 2-րդ, 3-րդ և 4-րդ և այլն), կրթական գործընթացը վարում է մեկ ուսուցիչ, բայց դասարանում նստած են տարբեր տարիքի և դասարանի աշակերտներ: Այս նորամուծությունը թույլ է տալիս կրճատել դպրոցի ուսուցչական կազմը: Անշուշտ, այս կերպ էլ ավելի կտուժի ուսումնառության որակը, կառաջանա նոր դժգոհություն ծնողների շրջանում, և աշակերտների թիվը կշարունակի պակասել: Փաստորեն, այս մեթոդով հայկական դպրոցների և հայեցի կրթություն ստանալու գլխավոր խնդիրը ոչ միայն չի լուծվում, այլև խորանում է այս համակարգում առկա ճգնաժամը:

Իրականում, Վրաստանում տխուր հեռանկար ունեն ոչ միայն հայկական, այլև ռուսական դպրոցները, այն պարզ պատճառով, որ, համաձայն կառավարական որոշման, բուհ ընդունվելու համար բոլոր դիմորդները պետք է հանձնեն վրացերեն լեզվի քննություններ նույն բարդությամբ, ինչ և պահանջվում է վրացական դպրոցների շրջանավարտներից: Այդ է պատճառը, որ եթե մինչև վերջերս հայերը զանգվածաբար հաճախում էին ռուսական դպրոցներ, ապա վերջին 1-2 տարիներին նկատվում է դեպի վրացական դպրոցներ հայերի հոսքի ավելացում:

ԲՈՒՀ. Թբիլիսիի Ա.Պուշկինի անվան մանկավարժական ինստիտուտը, որտեղ 1939-ից գործում էր հայկական ամբիոնը, տարիներ շարունակ հայկական դպրոցներին ապահովել է բարձրորակ ուսուցիչներով ոչ միայն հայոց լեզու, հայ գրականություն, այլև հայերեն լեզվով ֆիզիկա, մաթեմատիկա, քիմիա և այլ առարկաներ դասավանդելու համար: Այսօր այս ինստիտուտն այլևս գոյություն չունի: Այն միացվել է Օտար լեզուների ինստիտուտին և վերանվանվել Ի.Ճավճավաձեի անվան լեզուների համալսարան: Սկզբում գործում էր հայկական բաժին, բայց վերջերս այն միավորվել է

ադրբեջանական, ռուսական և այլ լեզուների բաժինների հետ: Խորհրդային շրջանում հայկական ամբիոնը միջինը տարեկան ունենում էր 10 ուսանող: Անցած ուսումնական տարում 2 դիմորդ է ունեցել, հետո դասախոսական կազմի ջանքերով հասցվել է 6-ի, բայց 1 ուսանող վճարովի համակարգից դուրս է մնացել վարձը չմուծելու պատճառով: Դիմորդների թվի անկումը բացատրվում է նրանով, որ այս ամբիոնի շրջանավարտն աշխատանք գտնելու լուրջ խնդիր կունենա, քանի որ հայկական դպրոցներում բոլոր առարկաները (բացի հայոց լեզվից և գրականությունից) դասավանդվելու են միայն վրացերենով:

Հայկական դպրոցների աղետալի վիճակն ուղղակիորեն բացասաբար է ազդում բուհական համակարգում վերը նշված միակ գործող հայկական բաժնում կրթական գործընթացի կազմակերպման վրա՝ այն նույնպես դարձնելով անհեռանկարային:

Այսպիսով, Վրաստանի կառավարությունը հետևողական ջանքեր է գործադրում Թբիլիսիում հայապահպանության հիմնական գործառույթ իրականացնող հայկական դպրոցների վերացման ուղղությամբ: Այս բնագավառում հիմնախնդիրներն արդեն համակարգային բնույթ են կրում: Իրավիճակն այնպիսին է, որ այսօր արդեն մեծ ջանքեր կպահանջվեն տեղի հայության կողմից այս զարգացումները կասեցնելու համար:

Եթե իրատես լինենք, ապա պետք է նշենք, որ ներկայումս հայ համայնքի ներուժը բավարար չէ այս խնդրի կարգավորման համար: Տեղի հայությունը խնդիրը լուծելու միակ ուղին համարում է ՀՀ իշխանությունների և սփյուռքի աջակցությամբ համատեղ ծրագրերի մշակումն ու դրանց իրականացումը:

Եկեղեցի. Հայ Առաքելական եկեղեցին ավանդաբար առանցքային դերակատարում ունի բարձրացված հիմնախնդիրներում: Վիրահայոց թեմի հայանպաստ գործունեությունը Թիֆլիսում վերջին ժամանակներս ավելի ու ավելի նկատելի է դարձել: Զրույցների ժամանակ բազմիցս շնորհակալական խոսքեր են ուղղվել Վիրահայոց թեմի առաջնորդ Տ.Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանին այս կամ այն խնդրի (կրթական, բարեգործական, մշակութային և այլն) լուծմանն աջակցելու համար:

Ընդհանուր առմամբ, տպավորությունն այնպիսին է, որ Վիրահայոց թեմում խորապես գիտակցում և պատկերացնում են թիֆլիսահայ համայնքում առկա խնդիրները, որոնք արդյունք են համայնքի դերի նվազման և գրեթե բոլոր ոլորտներում հայկական տարրի ներկայության թուլացման:

Վիրահայոց թեմը կարևոր քայլեր է ձեռնարկում երիտասարդներին իրենց հայկական արմատներին դարձնելու, նրանց մեջ հայկական ոգին

պահպանելու ուղղությամբ: Թեմին կից գործում են 3 խորհուրդներ՝ երիտասարդների հարցերով, մշակութային և կրթական: Դրանք ղեկավարում են թիֆլիսահայ ակտիվ երիտասարդներ, ինչը ոչ միայն դրական է անդրադառնում համայնական կյանքում նշված ոլորտների աշխուժացման առումով, այլև նպաստում է երիտասարդների և հոգևոր կառույցի միջև հարաբերությունների սերտացմանը: Այսպես, թեմի ջանքերով հայկական դպրոցներից մեկում կազմակերպվում են հայոց լեզվի դասընթացներ նրանց համար, ովքեր չեն տիրապետում մայրենի լեզվին (նշենք, որ դրանց թիվը հատկապես մեծ է երիտասարդների շրջանում): Մեր երիտասարդ զրուցակիցները մեծ ոգևորությամբ էին նշում, որ ամեն շաբաթ հաճախում են այդ անվճար դասընթացներին, որտեղ 18-20 անձից բաղկացած խմբերում սովորում են գրել, կարդալ մայրենի լեզվով:

Այսօր էլ եկեղեցին հիմնականում այն վայրն է, որտեղ հայերը հանդիպում են իրար, շփվում, նորություններ փոխանակում, մտքեր արտահայտում (հարկ է նշել, որ Թիֆլիսի հայկական համայնքը չունի գրասենյակ կամ շենք, ինչպես, օրինակ, հրեական համայնքը, որտեղ այդ շփման դաշտը կարող էր ձևավորվել):

Մինչև օրս Վիրահայոց թեմը խնդիրներ ունի իրավական դաշտում: Վրացական իշխանությունները հրաժարվում են թեմը գրանցել որպես կրոնական համայնք կամ կազմակերպություն՝ փոխարենը առաջարկելով մասնավոր իրավունքի սուբյեկտի կարգավիճակ: Այս հարցերին լավատեղյակ մեր զրուցակիցը նշում է. *«Վրաստանի պետությունը մեր թեմին չի ընձեռում իրավական կարգավիճակ: Առաջնորդարանը պետք է լինի թեմի հաշվապահական հաշվեկշռում, բայց իրավական տեսակետից մենք գտնվում ենք փողոցում, քանի որ թեմը կարգավիճակ չունի: Մեզ առաջարկում են գրանցվել որպես հիմնադրամ կամ հասարակական կազմակերպություն, որն իրավունք ունի զբաղվել կրոնական հարցերով: Մենք չենք համաձայնվում, քանի որ պարզ չէ, թե ինչպես կլուծվի այդ պարագայում ժառանգության հարցը: Ի դեպ, մյուս կրոնական փոքրամասնությունները՝ հրեաները, մահմեդականները, կաթոլիկները, նույնպես չունեն իրավական կարգավիճակ»* [4]:

Վրաստանում մինչև այսօր բացակայում են կրոնական միավորումների, խղճի ազատության և դավանանքի մասին օրենքները: Վրացական կողմը Վիրահայոց թեմին կրոնական համայնքի կարգավիճակ շնորհելու իր անհամաձայնությունը պատճառաբանում է նրանով, որ համայնության հոգևոր կենտրոնը գտնվում է Վրաստանի սահմաններից դուրս:

Վրաստանի կառավարության այս դիրքորոշմանը դեմ են հանդես գալիս նաև մյուս կրոնական համայնքների առաջնորդները: Այսպես, 2006թ.

մարտի 27-ին Հայ Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմի առաջնորդարանում տեղի ունեցած Վրաստանի քրիստոնեական հարանվանությունների առաջնորդների 2-րդ հանդիպման ժամանակ Լյութերական եկեղեցու առաջնորդն ընդգծեց, որ «կառավարությունը հիշյալ խնդիրների կարգավորմանն ընդառաջ չի գնում, ինչը կարող է հանգեցնել Ստրասբուրգի դատարան դիմելուն՝ պաշտպանելու համար սեփական իրավունքները: Այն պարագայում, երբ ըստ 2002թ. Վրաց ուղղափառ եկեղեցու և Վրաստանի կառավարության միջև ստորագրված սահմանադրական համաձայնագրի՝ վրաց եկեղեցին կողմ էր Վրաստանում գործող կրոնական ավանդական հարանվանություններին իրավաբանական կարգավիճակ տրամադրելուն» [5]:

Հայկական եկեղեցիների վերադարձման հարցը, անշուշտ, շատ կարևոր է[1]: Առաջին հերթին խոսքը 6 եկեղեցիների վերադարձման մասին է, որոնցից 5-ը Թբիլիսիում են, մեկը՝ Ախալցխայում: Թեմի իրավական կարգավիճակի չլուծվածության պատճառով եկեղեցիների վերադարձման հարցը դեռևս մնում է օդում կախված, ինչը խորացնում է վրաց և հայ համայնքների բարոյահոգեբանական անջրպետը և փոխադարձ անվստահության մթնոլորտը:

Ի դեպ, այս խնդրի մասին իր կարծիքն է արտահայտել նաև ԱՄՆ Պետդեպարտամենտը, որը «2005թ. կրոնի ազատության ասպարեզում առկա դրության մասին» 2005թ. նոյեմբերի 8-ի իր զեկուցման մեջ նշում է. «Առանձնապես սուր է ծառացած Նորաշեն եկեղեցու հարցը: Մինչև խորհրդային ժամանակաշրջանը տաճարը պատկանում էր Հայաստանյայց Առաքելական եկեղեցուն: Խորհրդային ժամանակաշրջանում այստեղ տեղադրվել էր գիտությունների ակադեմիա: 1995թ. փետրվարի 15-ին պատրիարքության որոշմամբ եկեղեցին օծվեց որպես Աստվածամոր ավետման եկեղեցի, և այնտեղ մատուցվեց ուղղափառ պատարագ: Այդ կապակցությամբ Հայ եկեղեցին բողոք հայտնեց: Պատրիարքությունը հարկադրված եղավ հեռանալ եկեղեցուց, սակայն չզիջեց Հայ եկեղեցուն: Այսօր Նորաշենը մատնված է անգործության» [5]:

Եկեղեցիների վերադարձման հարցը մեծապես հուզում է նաև տեղի հայ երիտասարդությանը: Նրանց կազմակերպված հատվածը ոչ միայն մշտապես ներկա է լինում Սուրբ Գևորգ եկեղեցում տրվող կիրակնօրյա պատարագին, այլև պարբերաբար անցկացնում է Նորաշեն եկեղեցու շրջակա միջավայրի մաքրման աշխատանքներ, ինչն աննկատ չի մնում տեղի իշխանությունների և հոգևորականների կողմից:

[1] 19-րդ դ. սկզբին Թիֆլիսում գործում էր 26 հայկական եկեղեցի, այսօր միայն երկուսն են՝ Սուրբ Գևորգը և Նոր Էջմիածինը: Մեծ մասն ավերվել է (Վանքի տաճարը, Սուրբ Գևորգ Կամոյանցը, Սուրբ Գևորգ Զրկինյանցը և այլն), իսկ մնացածն այսօր պատկանում են Վրաց ուղղափառ եկեղեցուն (Սուրբ Ստեփանոս, Սուրբ Կարապետ և այլն) [7]:

Եկեղեցիների խնդրի «բորբոքմանը նոր «շունչ» հաղորդեց այս տարի գարնանը Թբիլիսիում անցկացված «Քրիստոնեությունը մեր կյանքում. անցյալը, ներկան, ապագան» միջազգային սիմպոզիումը, որտեղ հայ հոգևորականության ներկայացուցիչների առաջադրած մի շարք դրույթներ՝ անցյալում մոտ 600 շինությունների վիրահայ թեմի կազմում գտնվելու մասին, արտակարգ հուզեցին վրացական գիտական շրջանների առանձին ներկայացուցիչների: Խորհրդաժողովի ընթացքում նրանք ոչ կոռեկտ դիտողություններ արեցին Հայ եկեղեցու ներկայացուցիչների հասցեին, իսկ հետո այդ զայրալից դեմարշը փոխադրվեց մի շարք վրացական թերթերի էջեր» [5]:

Իրավամբ, վրացական մամուլում կարելի է հանդիպել բազմաթիվ հրապարակումների, որտեղ հայերի կերպարը բավական աղճատված է ներկայացվում: Այսպես, «Ջորջիան Թայմս» լրագրում Վրաստանի հոգևոր ակադեմիայի պատմության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ս.Վարդոսանիձեի հարցազրույցում ասվում է. «Նա (Վիրահայոց թեմի առաջնորդ Տ.Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը– *Թ.Վ.)* երևանցի է, և զարմանալի է, որ տեղի հայությունը ձգտում է ազդել նրա վրա: **Տեղացի հայերը բավական ագրեսիվ են, ցավոք, մի երկրի նկատմամբ, որն իրենց մեծացրել է, կիսվել մի կտոր հացով» [8]:** Գիտնականն իր խոսքն ավարտում է՝ մեջբերելով Իլյա Ճավճավաձեի խոսքերը. **«Ավելի լավ է առյուծի հանդիպել ճանապարհին, քան թշնամի ունենալ տանը» [8]:**

Կա մեկ այլ խնդիր ևս. Վրաց ուղղափառ եկեղեցու հոգևորականներն իրենց հավատացյալների շրջանում քարոզում են, թե իբր հայերը քրիստոնյաներ չեն: Ինչպես նշում է իմ զրուցակիցը, *«շատ ու շատ վրացիներ մեզնից վախենում են, հարցնում են՝ «դուք սատանայանանե՞ր եք», քանի որ իրենք չեն հասկանում մոնոֆիզիտ բառի իմաստը և իրենց եկեղեցիներում ասում են, որ վրացիներն են առաջինն ընդունել քրիստոնեություն, իսկ հայերը քրիստոնյաներ չեն»* [4]:

Ներկայումս Վիրահայոց թեմի առջև ծառացած առաջնային խնդիրներից է նաև թիֆլիսահայերի շրջանում աղանդավորների թվի աճը: Մեր զրուցակիցներից մեկի հավաստմամբ՝ «աղանդավորներ են գալիս Հայաստանից, որոնք տեղի հայերի շրջանում քարոզում են աղանդավորական ուսմունքներ»: Բնական է, որ տեղի հայերի շրջանում հայաստանցի հայերի նկատմամբ վստահությունն ավելի բարձր պետք է լինի, քան աղանդավոր վրացիների նկատմամբ, ինչի մասին, թերևս, տեղյակ են աղանդների տարածման առաքելություն ստանձնած կազմակերպությունները: Այդ պատճառով կազմակերպվում է Հայաստանից աղանդավոր քարոզիչների «գործուղում» Թբիլիսի՝ տեղի հայության շրջանում համապատասխան քարոզչական աշխատանքներ իրականացնելու նպատակով:

Արտահայտելով իր հետևողականությունը վիրահայերի հոգևոր անվտանգության հիմնահարցերում, ինչպես նաև հայ եկեղեցիների վերադարձման խնդրում՝ Վիրահայոց թեմը 2006թ. ձեռնամուխ է եղել հոգևոր, մշակութային, լրատվական հանդեսի հրատարակմանը, որն անվանվել է «Նորաշեն»: Արդեն լույս է տեսել հանդեսի երկու համար: Առաջին համարի ներածական խոսքում Վիրահայոց թեմի առաջնորդ Տ.Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը նշում է. «Վիրահայությունը, ավաղ, շարունակում է ապրել միայն իր անցյալի փառքով: Ազգային-եկեղեցական ու կրթական-մշակութային կյանքում, որոշ հանգամանքների բերումով, դեռևս նկատելի չէ դրական լուրջ տեղաշարժ: Սակայն այլևս ժամանակն է իրատեսորեն գնահատել արդի մարտահրավերները և արթմնի տեր կանգնել մեր պատմական ժառանգությանը, վերանորոգել մեր խոնարհված եկեղեցիները, վերականգնել թեմական և ծխական կառույցները, զարգացնել մշակութային և կրթական կյանքը՝ հայորդիներին ոգեշնչելով Հայոց պատմությամբ, մայր Հայրենիքով ու Սուրբ Էջմիածնով» [6]: Մնում է հուսալ, որ «Նորաշեն» հանդեսին իսկապես կհաջողվի հասնել իր առջև դրված նպատակներին:

Ինչ վերաբերում է եկեղեցիների վերադարձման խնդրին, ապա Վիրահայ թեմը ստեղծված դրությունից դուրս գալու ելք է համարում Վրաստանի կառավարության հետ համաձայնագրի կնքումը, ըստ որի՝ կսահմանվի ոչ միայն թեմի իրավական կարգավիճակը, այլև կլուծվեն մնացյալ բոլոր վիճելի տարաձայնությունները:

Տպագիր մամուլ. Ներկայիս գլոբալացվող աշխարհում օրըստօրե աճում են տեղեկատվության դերն ու նշանակությունը: Եթե հետևենք հայտնի տեսաբան Բ.Անդերսոնի կարծիքին, ապա տպագիր արտադրանքի դերն ազգային ինքնագիտակցության ձևավորման (ավելացնենք՝ նաև վերազարթոնքի) մեջ գրեթե իրեն հավասարը չունի [9]: Նա նշում է, որ կապիտալիզմը և տպագրությունը ձևավորեցին միալեզու զանգվածային ընթերցողների հանրույթ, որն էլ նպաստեց (համենայնդեպս Եվրոպայում), ազգերի ձևավորմանը: Տպագրության կազմակերպման գործընթացում ընթերցողներն «աստիճանաբար սկսեցին գիտակցել հարյուր հազարավոր կամ միլիոնավոր մարդկանց ներկայությունն իրենց հետ միևնույն լեզվական դաշտում, նաև այն, որ հենց այդ հարյուր հազարը կամ միլիոնն են միայն պատկանում այդ դաշտին: Եվ ազգային պատկերացրած հանրույթի բջիջը ձևավորում են այդ համաընթերցողները, որոնք տպագրության միջոցով միավորված են իրար» [9, c. 67]: Մի կողմ թողնելով ազգերի ձևավորման դիսկուրսը (այն սույն հոդվածում արծարծվող խնդրի շրջանակներից դուրս է)՝ նշենք, որ տպագիր մամուլը, հատկապես ազգային լեզվով հրատարակվող, նաև

հեռուստատեսությունը, ի զորու են խթանել ազգային վերազարթոնքը, նպաստել ինքնագիտակցության աճին, ազգային լեզվամտածողության ձևավորմանը և նոր լիցք հաղորդել համայնքներում հայապահպան գործին:

Այսպիսով, զանգվածային լրատվամիջոցներն առաջնային դերակատարում ունեն ոչ միայն համայնքային խնդիրների վերհանման, քննարկման, հնարավոր լուծումների որոնման հարցերում: Դրանք առավել կարևոր են ներկայումս թիֆլիսահայ համայնքի համար հրամայական դարձած՝ ազգային վերազարթոնքի, էթնիկ ինքնագիտակցության ակտիվացման խնդիրներում:

Ցավոք, պետք է նշել, որ Թբիլիսիի տեղեկատվական դաշտում հայկական տարրը թույլ է ներկայացված: Խոսքն առաջին հերթին հայալեզու տպագիր մամուլի սահմանափակ քանակության, կարելի է ասել՝ գրեթե բացակայության մասին է: Այսպես. Թբիլիսիում լույս է տեսնում համապարփակ տեղեկատվություն տրամադրող հայերեն ընդամենը 1 թերթ՝ «Վրաստան»-ը: Այն պաշտոնական թերթ է (խմբ.՝ Վ.Բայբուրթ, Վրաստանի ԱԺ պատգամավոր), այդ իսկ պատճառով տեղի հայության կողմից թերթն ընկալվում է որպես վրացական իշխանությունների խոսափող: Այն չի կարող բավարարել հայկական թեմատիկայի նկատմամբ առկա տեղեկատվական պահանջարկը: Թերթում հիմնականում զետեղվում են պաշտոնական լրահոսը և վրացալեզու պաշտոնական թերթերի համեմատ ավելի մանրամասն նյութեր հայ-վրացական միջպետական մակարդակի հանդիպումների ու քննարկումների մասին:

Լույս է տեսնում նաև հայերեն մեկ մանկական թերթ՝ «Արևիկ»-ը (հրատարակվում է համանուն բարեգործական ՀԿ ջանքերով): Առաքվում է հիմնականում Թբիլիսիի, Ջավախքի, Երևանի հայկական դպրոցներ: Թերթը պարբերաբար ֆինանսական խնդիրներ է ունենում, բազմիցս կանգնել է փակման վտանգի առջև: Բացի այդ, պարբերականի շուրջ հավաքված անձանց և մանուկ ընթերցողների երազանքն է «թերթը տեսնել գունավոր»: Թերթի խմբագրի խոսքերով՝ *«Այստեղի հայկական դպրոցներ ուղարկում ենք, կեսն անվճար ենք տալիս, կեսին գոնե ասում ենք՝ վճարեք, որ կարողանանք հաջորդ համարը թողարկել: Տպարանում շաբաթներով մնում է, չենք կարողանում հանել…Նամակներ ենք ստանում, ուզում են, որ գունավոր լինի, բայց ֆինանսի պատճառով դեռ անհնար է»* [4]:

Մյուս հայալեզու հրատարակությունն արդեն վերը նշված «Նորաշեն» հանդեսն է: Հանդեսի անդրանիկ համարում կարդում ենք. «Նոր պարբերականը ծառայելու է հայության միասնականության ամրապնդմանը, հուզող հիմնախնդիրների վերհանմանն ու դրանց հնարավոր լուծմանը: Այն դառնալու է հայության տարբեր շերտերի ու դիրքի ներկայացուցիչների համար

մտքերի և կարծիքների արտահայտման միջոց» [6]: Հանդեսը, համայնքին հուզող թեմաներից զատ, անդրադառնալու է նաև մեր եկեղեցու պատմությանը, ծեսերի նկարագրությանը, դրանց խորհրդի պարզաբանմանը և այլն:

Նշված հրատարակությունները հայալեզու են: Համայնքի ակտիվ անդամներից մի քանիսի կարծիքով՝ հայալեզու հրատարակության պահանջարկն օր օրի նվազում է, քանի որ մայրենի լեզուն հասկանալի է հիմնականում ավագ սերնդի ընթերցողներին:

«Նոր սերունդ» ՀԿ ջանքերով լույս է տեսնում համանուն թերթ ռուսալեզու հայ ընթերցողների համար: Թերթի էջերում առավելապես լուսաբանվում են ՀԿ սեկտորին, նշված կազմակերպության գործունեությանն առնչվող և այլ թեմաներ: Բայց այն ևս զանգվածային լրատվամիջոց չի կարելի համարել, քանի որ նույնպես ընթերցողների թեմատիկ սահմանափակ հասցեականություն ունի:

Եթերաժամ (հեռուստատեսություն, ռադիո). Վրաստանի հեռուստատեսությամբ շաբաթը մեկ անգամ հեռարձակվում է ընդամենը մեկ հայերեն հաղորդում (ինչը Եվրախորհրդի պահանջն է): Տևողությունը մոտ 25 րոպե է, հեռուստադիտողների համար օրվա ոչ բարենպաստ ժամի՝ 16.00, և հեռարձակվում է ոչ թե հանգստյան, այլ աշխատանքային օր՝ չորեքշաբթի: Առանց մեկնաբանության ներկայացնենք հարցազրույցից մի հատված.

Հարց – Հեռուստաեթերի ընթացքում էթնիկ, քաղաքական խնդիրներ շոշափո՞ւմ եք:

Պատ. - 2004թ. դեկտեմբերի 22-ից եթերում ենք… էթնիկ պրոբլեմների մասին չենք խոսում: Մեզ խնդրել են, որ ոչ մի պոլիտիկայի մասին չխոսենք:

Հարց - Իսկ Հայաստանի մասին լուրեր տալի՞ս եք:

Պատ. - Չէ, Հայաստանը մեր ֆորմատում չի նստում, մենք պիտի լուսաբանենք միայն Վրաստանի և Վրաստանի հայության վերաբերյալ լուրեր, ուրիշ բան չի կարելի: Եթե Հայաստանից պաշտոնական այցով գալիս են, մենք ունենք թույլտվություն 1.5 րոպեում դա լուսաբանել:

Հարց - Ձեր արդեն 1.5 տարվա գործունեության ընթացքում երբևիցե Ղարաբաղի մասին գոնե 1 այուժե տվե՞լ եք կամ «Ղարաբաղ», «Արցախ» բառերը երբևէ եթերից արտասանվե՞լ են:

Պատ. - Չէ, մեզ թույլ չեն տալիս [4]:

Այսպիսով, պարզ է, որ այս հեռուստահաղորդումը, որը պետական հովանավորությամբ է եթեր հեռարձակվում, նույնպես չի կարող հագեցնել վիրահայոց տեղեկատվական ծարավը ոչ միայն եթերի տևողության սահմանափակության և ոչ նպատակահարմար եթերաժամի պատճառով, այլև, առաջին հերթին, բովանդակային առումով. էթնիկ փոքրամասնությունների

խնդիրների արծարծումը դիտվում է որպես «պոլիտիկա», իսկ Հայաստանից կամ Արցախից ցանկացած լուր չի համապատասխանում քաղաքական կոնյունկտուրային:

Թիֆլիսահայերը Հայաստանի մասին հայերեն կցկտուր տեղեկություններ կարող են ստանալ ռադիոեթերով, որը տևում է ընդամենը 5 րոպե, ամեն օր, բացի շաբաթ և կիրակի օրերից: Մեր զրուցակիցները (հատկապես ավագ սերնդի ներկայացուցիչները) խոր ափսոսանքով նշում են, որ չկա հայկական ռադիո. *«Ռադիոն շատ կարևոր է, երբ որ լույս չկար, մարդիկ էլեմենտներ էին առնում, որ լսեն: Մենք էդ ռադիոյով ենք մեծացել, մասսայաբար բոլորը լսում էին: Հաղորդում էին հայկական երգ-երաժշտություն»* [4]: Այժմ տեղի հայությունը հաճախ հայկական երաժշտություն է պատվիրում ռուսական ռադիոժամի՝ Հիթ-ՖՄ-ի եթերում, այն էլ *«շնորհիվ մի հանգամանքի, որ այնտեղ աշխատողներից մեկը հայ է»* [4]:

Այսօր հայալեզու հրատարակությունները տեղի հայությունն ընթերցում է հիմնականում այն պատճառով, որ դրանք հայալեզու են, իսկ համապարփակ տեղեկատվություն շարունակում է քաղել ռուսալեզու կամ վրացալեզու մամուլից: Նույնը կարելի է ասել հեռուստահաղորդման և ռադիոհաղորդման մասին: Այսինքն՝ առկա տեղեկատվական լրահոսը չի բավարարում (եթե օբյեկտիվ լինենք, չի էլ կարող բավարարել) տեղեկատվության պահանջը, քանի որ այն գործում է Վրաստանի պետության ֆինանսների հաշվին:

Շուկայական հարաբերությունների պայմաններում զրեթե անընդունելի է մի իրավիճակ, երբ հայալեզու տեղեկատվական դաշտը համարյա ամբողջությամբ Վրաստանի պետական, խիստ սահմանափակ, նաև վերահսկվող դոտացիոն հովանավորմամբ է գործում: Այստեղ անհրաժեշտ են ֆինանսավորման այլ աղբյուրներ, որոնք հնարավորություն կընձեռեն նաև որոշակիորեն ազատ տնօրինել ոչ միայն տեղեկատվության տարածման տևողության, ծավալի, այլև, որ ամենակարևորն է՝ բովանդակության հետ կապված հարցերը: *«Երևի հանրայինում չեն թողնի, մասնավորում էլ է դժվար: Բայց կարող ենք չաստոտա վերցնել:... Մի քանի անգամ փորձել ենք, չեն տալիս: Ասում են ծրագիրը լավը չի, բայց եթե գաղափարը դուրները չի գալիս, ամեն պատճառ կարելի է գտնել ու թույլ չտալ: Ռադիոն անպայման պետք է, մենք 5 տարի՝ 1999-2004թթ. վակուումում էինք գտնվում, հիմա այս հաղորդումն ինչ-որ ձևով լրացրեց: ...Եթե ֆինանսական աջակցություն լինի, հնարավոր է մասնավոր ալիքներով կազմակերպել հաղորդում: Այս փուլում, քանի որ հեռուստատեսությունը թանկ հաճույք է, պետք է Հայաստանը գա կամ ինչ-որ հայ գործարար, խոսի այստեղի ալիքի տնօրինության հետ, թե ինչքան գումար է պետք, որ հայերեն հաղորդում հե-*

ռարձակվի. չնայած հարց է՝ կհամաձայնվե՞ն, թե՞ ոչ։ Եթե գոնե շաբաթական մեկ անգամ էլ լրացուցիչ դուրս գանք եթեր, լավ կլինի, ավելի անկախ հաղորդում կպատրաստենք» [4]։

Այսպիսով, պետք է հստակ քայլեր ձեռնարկվեն, որպեսզի համայն հայության այս հատվածը հայերեն թերթը, ամսագիրը, հեռուստահաղորդումը կամ ռադիոհաղորդումն ընթերցի կամ ունկնդրի ոչ միայն դրանց հայալեզու լինելու, այլ նաև այն պատճառով, որ տեղեկատվությունն ինքնին և՛ հետաքրքիր կլինի, և՛ օգտակար, և՛ անհրաժեշտ։

Ըստ նախնական դիտարկումների՝ տեղեկատվական դաշտում գրեթե բացակայում են.

- Թիֆլիսում հայերին (հատկապես երիտասարդությանը) հուզող թեմաների մասին նյութեր,
- քաղաքական զարգացումների վերաբերյալ նյութեր կամ վերլուծականներ, որոնցում կկարևորվեն ՀՀ և համայն հայության շահերը,
- Ջավախքի մասին նյութեր (քանի որ թիֆլիսահայությունը Ջավախքից լուրեր ստանում է մեծ մասամբ վրացական ԶԼՄ-ից, այսինքն՝ միջնորդավորված),
- լուրեր Հայաստանից, Արցախից, սփյուռքից։

Ինտերնետային կայք. Տեղեկատվության տարածման ժամանակակից միջոցներից է ինտերնետը։ Անցյալ տարվանից գործարկվել է առաջին և առայժմ միակ հայկական կայքը (http://www.armenia.ge), որն այսօր արդեն բավական մեծ թվով այցելուներ ունի։ Կայքում գործում է մշտական ֆորում, որտեղ տարբեր թեմաներով քննարկումներին ակտիվ մասնակցում են ոչ միայն թիֆլիսահայերը, այլև երիտասարդներ Հայաստանից, սփյուռքից, անգամ վրացի երիտասարդներ։ Առայժմ կայքը միայն ռուսալեզու է։ Թեպետ նման կայքի գոյությունն արդեն մեծ առաջընթաց է, այնուամենայնիվ, այն դեռևս չի կարող զանգվածային լրատվական ծառայության վերածվել ինտերնետից օգտվողների սահմանափակ քանակի պատճառով։

Այսպիսով, թիֆլիսահայ համայնքում հայկականության պահպանման համատեքստում անցկացվելիք անհրաժեշտ միջոցառումների շարքում առանցքային տեղ են զբաղեցնում տեղեկատվական դաշտում հայկական տարրի ներկայության ապահովումն ու որոշակի դերակատարությունը։ Այս հարցի լուծման համար հնարավոր է նաև միջազգային դրամաշնորհների օգտագործումը, բայց այն խիստ սահմանափակ է և հղի նոր մարտահրավերներով, հետևաբար այդ դրամաշնորհներով էլ այս խնդրի լուծումը գրեթե անհնար ենք համարում։ Տեղեկատվական անվտանգության խնդիրների լուծումը պահանջում է հետևողական և համապարփակ

մոտեցում, ինչը հնարավոր է միայն տեղեկատվական ոլորտում հայկական ֆինանսական ներդրումների՝ հայկական կապիտալի շնորհիվ:

Մշակութային օջախներ. Թիֆլիսում հայության ներկայության մասին հիշեցնող ևս մեկ կարևոր և առանցքային օջախ է գործում՝ Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնը[1]: Այն իր խաղացանկում ունի 20-ից ավելի ներկայացումներ, հանդիսատեսի դատին է հանձնում տարեկան 4-5 ներկայացում, կոլեկտիվը բաղկացած է 103 հոգուց: Թատրոնը ֆինանսավորվում է Վրաստանի մշակույթի նախարարության կողմից [10]:

Պետք է նշել, որ Հայաստանի կառավարությունը (թե՛ ներկա, թե՛ անցյալ) մեծ ուշադրություն է դարձնում Թիֆլիսի հայկական թատրոնին: ՀՀ պետական բյուջեից տարեկան ֆինանսական աջակցություն է տրվում, ինչը հնարավոր է դարձրել թատրոնի գոյության ու անխափան գործունեության ապահովումը: Հատկապես 90-ականների ճգնաժամային իրավիճակում այդ օգնությունը խիստ կարևոր է եղել: Թատրոնի շենքն այսօր աստիճանական վերանորոգման է ենթարկվել: Անցած տարվանից, ՀՀ նախագահի հովանավորությամբ, թատրոնի շենքը նաև ջեռուցվում է: Իսկ սույն թվականի հոկտեմբեր ամսին անցկացվեցին 150-ամյա թատրոնի հոբելյանական միջոցառումները, որոնք ընթացան ՀՀ վարչապետի հովանավորությամբ:

Այժմ թատրոնի հանդիսատեսների թիվն աստիճանաբար ավելանում է: Ներկայացումները հայերեն են: Բայց արդեն լուծվել է նաև ռուսալեզու և վրացալեզու հայ հանդիսատեսին թատրոն բերելու խնդիրը. *«Վերջին երկու տարիներին մեր թատրոնը սկսեց ուրիշ մեթոդ էլ կիրառել, ռուսալեզու հայերի հետ աշխատելը շատ կարևոր է, սկսեցինք զանգել տները, հրավիրել թատրոն: Ներկայացումները հայերեն են, բայց արդեն ունենք սինխրոն թարգմանություն ռուսերեն ու վրացերեն: Հայերի 80%-ը ռուսախոս է, շատերը խոսում են, բայց չեն կարդում: Մենք պետք է հավաքվենք, թե չէ կկորենք»* [4]:

Թիֆլիսի հայկական թատրոնը կարելի է դիտել ոչ միայն որպես թատերական բարձր արվեստի կենտրոն, այլև որպես Թիֆլիսում հայկական ոգու պահպանման առաջատար օջախ: Հարցին, թե «երբ շարքային հայը Թիֆլիսում որևիցէ խնդիր է ունենում, ավանդաբար ո՞ւր է գնում, ո՞ւմ է դիմում», շատերը պատասխանում էին՝ *«Հավլաբարի հայկական թատրոն»:*

Բացի թատրոնից, որը, ինչպես նշեցինք, պետական հովանավորու-

[1] Թբիլիսիում առաջին անգամ հայերեն ներկայացում տրվել է 1824թ. նոր բացված Ներսիսյան դպրոցում: Իսկ 1856թ. դրվել է Թբիլիսիում պրոֆեսիոնալ դերասանական խմբի և հայ թատրոնի հիմքը: Հիմնադիրն ու ղեկավարն էր Գևորգ Չմշկյանը: 1936թ. հայ դերասանական կոլեկտիվը ձեռք է բերել իր սեփական շենքը [10]:

թյան շնորհիվ է իրականացնում իր գործունեությունը, Թիֆլիսում հասարակական հիմունքներով՝ ՀԿ-ի կարգավիճակով գործում են ևս մի քանի հիշատակության արժանի՝ հայ մշակույթի պահապան օջախներ: Դրանցից է Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միությունը, որտեղ միավորված են ամբողջ Վրաստանի հայազգի գրողները: Այսօր այս միությունը գործում է որպես հասարակական կազմակերպություն: Զրուցակիցս նշում է. *«Խորհրդային շրջանում գործում էր Վրաստանի գրողների միություն, որտեղ կար հայկական մասնաճյուղ: Երկիրը որ քանդվեց, Վրաստանի գրողների միությունն ընդունեց մի զազրելի օրենք՝ դարձրին ազգային գրողների միություն, մենք* (հայազգի գրողները– *Թ.Վ.) մեխանիկորեն դուրս մնացինք»* [4]: Այդ է պատճառը, որ Վրաստանի հայ գրողները միավորվել են ՀԿ-ում և, բնականաբար, ունենում են ֆինանսական բազմաթիվ խնդիրներ իրենց ստեղծագործությունները հրատարակելու, հայ ընթերցողին հասանելի դարձնելու հարցում:

Տեղի սակավ միջոցներով գործում են նաև մի քանի հայկական պարային համույթներ՝ «Վանք», «Ջեյրան» և այլն: Ակտիվ գործունեություն ծավալելու համար միջոցները չեն բավականացնում: Նշենք, սակայն, որ հայկական պարարվեստը ճանաչված ու սիրված է վրաց հանդիսատեսի կողմից: Օրինակ՝ «Վանք» համույթը 2 անգամ՝ 1998 և 1999թթ., արժանացել է Թբիլիսիում անցկացվող «Ոսկե արծիվ» փառատոնի ոսկե մեդալին՝ հետևում թողնելով մրցույթին մասնակցող վրացական համույթներին:

5. Ջավախքը թիֆլիսահայության աչքերով

Մեր հետազոտության շրջանակներում դրված էր մի խնդիր ևս, այն է՝ ընդհանուր գծերով պարզել թիֆլիսահայ համայնքում առկա տրամադրությունները Ջավախքի հիմնախնդրի վերաբերյալ:

Հայտնի է այն տեսակետը, որ թիֆլիսահայերը բավական պասիվ, թույլ կազմակերպված և անտարբեր են ջավախահայերի ճակատագրի նկատմամբ: Դա բացատրվում է նրանով, որ թիֆլիսահայերը, ապրելով մայրաքաղաքում, առավել ինտեգրված են վրացական հասարակությանը և հետևողական չեն հայապահպանության խնդիրներում: Ըստ մեր հետազոտությունների, առկա է շեշտադրված տարբերակում թիֆլիսահայերի և ջավախահայերի միջև՝ հոգեկերտվածքի, մտածելակերպի և վարքագծի առումներով: Հասարակական ընկալումներում արմատացած են երկու տարբեր կարծրատիպեր. լեռնցու խիզախությամբ օժտված, անզիջում, առավել քաղաքականացված ջավախահայի և զուսպ, հարմարվողական, փոքր-ինչ անտարբեր, ոչ այնքան քաղաքականացված թիֆլիսահայի կերպարները: Այս տարբերությունները բացատրվում են թե՛ օբյեկտիվ, թե՛

սուբյեկտիվ գործոններով՝ սկսած Ջավախքի լեռնային կլիմայով, Հայաստանին մոտ լինելու պարագայով (ինչով թիֆլիսահայերի կողմից հիմնավորվում է ջավախահայերի խիզախությունը), Ջավախքում առկա խոր սոցիալ-տնտեսական խնդիրներով և այլն: Համարյա թե չի հնչում այն միտքը, որ **ջավախահայերը, վերջին հաշվով, բնակվում են իրենց պատմական Հայրենիքում:** Կարելի է ասել, որ այս գաղափարը չկա թիֆլիսահայերի գիտակցության մեջ:

Ուրվագծենք թիֆլիսահայության կողմից Ջավախքի խնդրի ընկալման մի քանի ընդհանուր և տարածված պատկերացումներ.

1. Հաճախ, երբ հարց էր հնչեցվում Ջավախքի մասին, թիֆլիսահայերի պատասխանը հետևյալն էր. *«Չէ, ես ապաքաղաքական մարդ եմ, չեմ ուզում խոսել Ջավախքի մասին»* [4]: Այսինքն՝ Ջավախքի հիմնախնդիրն ընկալվում է որպես առավելապես քաղաքական (կամ անհարկի քաղաքականացված) խնդիր, ինչի մասին խոսելը, հատկապես ձայնագրելու պարագայում, ցանկալի չէ, նույնիսկ վտանգավոր է:
2. Շատերը ջավախահայերի կողմից խնդիրների բարձրացումը օբյեկտիվ են համարում, այն դիտում են որպես Վրաստանի պետական անհեռատես քաղաքականության արդյունք.
   - *«Ես կոնֆերենցիային ասացի՝ «դուք արհեստականորեն կտրեցիք Ջավախեթին ձեզանից, հիմա էլ ասում եք՝ «Ջավախեթին մերը չի»: Մեր ալիքը ամբողջ Վրաստանով անցնում էր հասնում մինչև Կամչատկա, 1992թ. փոխեցին ալիքը՝ դարձանք Թբիլիսի և 60 կմ շառավիղ: Դա էլ Ախալքալաք չի հասնում: Ախալքալաքի բնակիչը ի՞նչ պիտի աներ՝ անտեննաներ դներ ու միացներ ՀՀ հեռուստատեսությո՞ւն, ռադիո՞ և Ռուսաստա՞ն: Այնտեղի բնակիչը ոչինչ չգիտի Վրաստանի մասին, միայն գիտի, որ Վրաստանի նախագահը Սահակաշվիլին է, իրենք արհեստականորեն կտրեցին իրենցից Ջավախքը, ասացին՝ Հայաստան, Ռուսաստան, վերցրու»* [4]:
   - *«Երբ որ Ջավախքում ցույցեր էին, մենք գնացինք: Այստեղ ԶԼՄ-ն ասում էին, որ Ջավախքում մարդիկ ավտոմատներով են: Բայց մենք գնացինք և տեսանք, որ այդպես չի. նրանք ուղղակի չեն ուզում կորցնել իրենց ինքնությունը: Պետք է նրանց հետ նորմալ խոսել, ասել, որ ձեր հողերն են և դուք այստեղ ապրում եք պատմականորեն: Այլ ոչ թե այստեղից ապատեղեկատվություն տարածողներ ուղարկել, որպեսզի նրանք էլ մշտապես տարածեն, թե շուտով կգան ՆԱՏՕ-ական և թուրքական զորքեր: Ով էլ լսի նման արտահայտություններ, միտինգ կանի»* [4]:

- *«Վրացերենի չիմացությունը ոչ թե հայ ժողովրդի հանցանքն է, այլ պետական քաղաքականության մեղքը»* [11]:

3. Թիֆլիսահայ միջավայրում ակտիվ շրջանառվում է պատանդի գաղափարը. թիֆլիսահայ իրականության մեջ տարածված է մի տեսակետ, ըստ որի՝ թիֆլիսահայերը ջավախահայերի պատանդն են: Մեջբերումներ հարցազրույցներից.
   - *«Ջավախահայերի համար տարբերություն չկա, թե մեզ հետ այստեղ ինչ կկատարվի: Իրենց ի՞նչ կա, եթե իրենց վրա հարձակվեն՝ նկուղից ավտոմատը կհանեն, իսկ մենք ի՞նչ հանենք՝ շշե՞ր: Ամեն ինչ Ղարաբաղից սկսվեց: Ես չեմ ասում, որ Ղարաբաղում չպետք է սկսեին, ես ասում եմ, որ ոչ թե քառսային ձևով էր պետք սկսել, այլ մեթոդական, գեղեցիկ՝ պետք էր սկզբից հայերին հանել Բաքվից, հետո... Ղարաբաղցիները սկսեցին, իսկ ադրբեջանցիները գազան են, 1905 թիվը հիշեցին:* ***Իսկ մեզ ոչ միայն 1905թ. կհիշեցնեն, այլև Աբխազիան, Օսիան, Ջավախքը, «Ծովից ծով Հայաստանի» քարտեզները:*** *Մենք այստեղից չենք հասցնի փախչել: Այստեղի փախստականները ագահությամբ են նայում Հավլաբարում ու Մետրոստրոյում մեր կառուցած տներին:* ***Մենք պետք է հասկանանք, որ բոլորս էլ այստեղ հյուր ենք»*** [4]:
   - *Հենց Ջավախքում խառնվում են, ասում ենք՝ «դե թողեք հանգիստ նստենք, էլի»* [4]:

Այնուամենայնիվ, պետք է նշել, որ «թիֆլիսահայությունը՝ որպես ջավախահայության պատանդ» ընկալումը հիմնականում շրջանառվում է առավել կենցաղային մակարդակում: Այս շրջանակներում նաև անընդունելի են համարում Ջավախքում հայերենը որպես պետական լեզու հռչակելու մասին հնչած կոչերը[1]: Բացի այդ, խիստ քննադատության է ենթարկվում ջավախահայերի շրջանում վրացերենի՝ որպես պետական լեզվի, չիմացությունը:

Փոխարենը՝ մի շարք մտավորականներ, քաղաքական գործընթացներին առավել ակտիվ հետևող անհատներ այլ կերպ են ընկալում ստեղծված իրավիճակը. նրանք ջավախահայությունը դիտում են որպես թիֆլիսահայության անվտանգության երաշխիք, որը, որպես այդպիսին, ցավոք,

[1] «Ինչ վերաբերում է Ջավախքում հայերենին պետական լեզվի կարգավիճակ շնորհելուն, կցանկանայի նշել, որ տվյալ հարցի լուծումը՝ իր ամբողջ հրատապությամբ հանդերձ, մոտակա հեռանկարում նվազ հավանական է: Ներկայումս թերևս կարելի է, օրինակ, բարձրացնել Ջավախքում հայոց լեզվին աշխատանքային կամ գործավարության լեզվի կարգավիճակ տալու հարցը՝ վրացերենի հետ: Նման դեպքում Վրաստանի ղեկավարության համար էլ անհամեմատ ավելի դյուրին կլինի գտնել հայոց լեզվի կարգավիճակի լավագույն տարբերակ» [5]:

թիֆլիսահայերի կողմից գնահատված ու գիտակցված չէ: Այսպես.

- *«Մենք Վրաստանի համար վտանգավոր ենք, որովհետև մենք հողի խնդիր ունենք: Մեկ-մեկ ասում են՝ ջավախահայերը որ ակտիվանում են, մեզ կարող է ճնշեն: Բայց պարզ չի՝ ո՞վ է զալոժնիկ՝ թիֆլիսահայե՞րը, թե՞ ջավախահայերը: Հարց է՝ ո՞վ ո՞ւմ է խանգարում կամ օգնում: Կարող է՞ իրենք են մեր զալոժնիկը, քանի որ մենք այստեղ կանք, մեր անվտանգության մասին մտածելով իրենք շատ չեն ակտիվանում: Եթե մեզ այստեղ մի քիչ ճնշեն, շատ հնարավոր է, որ Ջավախքը կորցնեն ավտոմատ կերպով»* [4]: (Նշենք, որ մեր զրուցակիցն այն քչերից է, որ հետևում է հայկական մամուլին):
- *«Փառք աստծո, որ Ջավախքի հայերն այդքան տոկուն են: Քանի կա Ջավախք, մենք էլ այստեղ կանք»* [4]:

Այս մոտեցման կողմնակիցները գիտակցում են, որ շնորհիվ ջավախահայության պաշտոնական Թբիլիսին զգուշավոր մոտեցում ունի նաև թիֆլիսահայության նկատմամբ:

Այս մոտեցմանը մենք կարող ենք ավելացնել այն, որ ջավախահայության գործոնը կարևոր դեր է խաղում ոչ միայն Վրաստանի ներքին, այլև արտաքին քաղաքականության մեջ: Ինչպես նշում է Ա.Այվազյանը, «Ջավախքի հայաբնակության գործոնը, Հայաստանի շահերին նրա բնական հավատարմությունն ու ազգային արմատները Թիֆլիսին զգալի չափով հետ են պահում Թուրքիայի և Ադրբեջանի հետ արդեն ձևավորված ռազմավարական գործընկերությունը խորացնելուց: Այդ գործոնի բացակայության պարագայում վրացական քաղաքականությունը տարածաշրջանում կընդունի արդեն բացահայտ հակահայկական ուղղվածություն» [12, էջ 17]:

Այսպիսով, ինչպես երևում է նյութերից, թիֆլիսահայ միջավայրում Ջավախքի հիմնախնդրի ընկալումը բավական աղճատված է, իջեցված կենցաղային մակարդակի, այն շրջանառվում է առանց խնդրի խորքային ըմբռնման և քննարկման: Դա զարմանալի չէ, քանի որ, ինչպես արդեն վերը նշել ենք, Ջավախքի խնդրի մասին թիֆլիսահայությունը տեղեկանում է բացառապես վրացական լրատվամիջոցներից: Այնուամենայնիվ, կարելի է լսել մի քանի սթափ և իրատեսական կարծիքներ նշված խնդրի շուրջ, բայց առավելապես այն անհատների կողմից, որոնք սերտ կապեր ունեն Հայաստանում կամ նրանց հասանելի է հայաստանյան մամուլը:

6. Հայաստանի տեղն ու դերը թիֆլիսահայության հիմնախնդիրներում

Հետևություններ. **Հայաստանի Հանրապետությունը պետք է հստակ դիրքորոշում ունենա Թբիլիսիում հայկական համայնքը պահպանելու կամ հայրենադարձություն կազմակերպելու ուղղությամբ, հատկապես Ջավախքի հիմնախնդրի օրըստօրե սրման միտումները հաշվի առնելով**[1]: Նշված դիրքորոշումը պետք է բխի մեր ազգային անվտանգության ընդհանուր հայեցակարգից:

Եթե ռազմավարական տեսակետից այդ համայնքն իր դերակատարումն ունի ՀՀ-ի համար, ապա խիստ անհրաժեշտ է մոտեցումներ մշակել համայնքի պահպանման, իսկ այնուհետև՝ նաև զարգացման համար: Այսօր օրակարգային կարող է լինել միայն համայնքի պահպանման հարցը: Իսկ զարգացման մասին մոտ ապագայում դեռևս խոսելը վաղ է, քանի որ համայնքը գտնվում է քայքայման եզրին: Առկա է ներքին ռեսուրսների նկատելի սահմանափակություն, և խոսքը ոչ միայն ֆինանսական, այլ նաև մտավոր և գաղափարական կարողությունների մասին է:

Եթե համայնքի պահպանման համար հստակ քաղաքականություն չմշակվի, ապա մեր հայրենակիցների մի մասը կփոխի հայկական ինքնությունը, իսկ մյուսն ուղղակի կարտագաղթի, ընդ որում՝ ոչ դեպի Հայաստան:

Հավանաբար, ներկա փուլում կարելի է մի կողմից՝ իրականացնել որոշակի միջոցառումներ համայնքի պահպանման ուղղությամբ, մյուս կողմից՝ մտածել աստիճանական հայրենադարձության կազմակերպման մասին, որպեսզի այդ գործընթացը հնարավորինս անցնցում իրականացվի թե՛ ՀՀ-ի, թե՛ թիֆլիսահայության համար:

Ներկայումս թիֆլիսահայ համայնքում որևէ միջոցառում իրականացնելու համար առաջին հերթին անհրաժեշտ է հաշվի առնել որոշ առանձնահատկություններ, որոնց մի մասն օբյեկտիվ է.

1. Թիֆլիսահայությունն իրեն որպես համայնք չի ընկալում: Դեռևս չի մարել հիշողությունն այն մասին, որ իրենք ապրում են իրենց տանը, որ իրենք այս քաղաքի տերն են, այն կառուցվել է հայկական կապիտալի կողմից և հայկական հմուտ վարպետների ձեռքով և այլն: «Տիրոջ» զգացողությունն է պատճառը, որ ինքնապահպանման մեխանիզմները խոր արմատներ չունեն այստեղ: Նաև այս զգացողությունն է պատճառը, որ վրացական միջավայրում հայկական տարրն ընկալվում է որպես առաջնային (եթե ոչ ամենաառաջին) խոչընդոտներից մեկը Վրաստանի մայրաքաղաքում վրացական գերիշխանության վերջնական հաստատման ճանապարհին:

[1] Այստեղ տեղին է հիշատակել Արցախի հիմնախնդրի արծարծման սկզբնական փուլում՝ 1988-1991թթ.՝ մինչև ռազմական գործողությունները, Բաքվի և Ադրբեջանի մյուս շրջաններում ապրող հայության ճակատագիրը:

2. Թիֆլիսահայությունն ունի Ջավախքի հիմնախնդիրը: Սա շատ լուրջ գործոն է և ազդում է թիֆլիսահայության վարքաբանության վրա: Թիֆլիսահայությունն իրեն պատանդի կարգավիճակում է տեսնում, ինչը խորացնում է բարոյահոգեբանական անջրպետը ջավախահայերի և թիֆլիսահայերի միջև: Ջավախքի խնդրի միտումնավոր բացասական երանգավորմամբ արծարծումը վրացական ներքաղաքական քարոզչական դաշտում նպաստում է թիֆլիսահայության շրջանակներում քննադատական վերաբերմունքի ձևավորմանը ջավախահայության նկատմամբ:
3. Թիֆլիսահայ համայնական կյանքի կազմակերպումն ընթանում է տարերայնորեն և չի ղեկավարվում որևէ կենտրոնից: Լուրջ խնդիր է համայնքում ներքին միասնության բացակայությունը, որը, ըստ մեր կողմից հարցման ենթարկվածների, մի քանի պատճառ ունի: Դրանք են՝ համայնքի ակտիվ հատվածի անհատական նկրտումները (ամբիցիաները), համայնական կյանքին բնորոշ ինքնապահպանման մեխանիզմների (իմունիտետի) բացակայությունը, անկախացումից ի վեր հայ մտավոր և ֆինանսական ներուժի արտագաղթը երկրից, բոլորի կողմից ընդունելի առաջնորդի բացակայությունը, անգամ վրացական հատուկ ծառայությունների նպատակաուղղված քաղաքականությունը և այլն:
4. Վրաստանում անկախության տարիներին ձևավորված օլիգարխների շրջանում ազգությամբ հայ գրեթե չենք հանդիպի. եթե կան, ապա տեղի հայությանը (անգամ ակտիվ հատվածին) դրանք ծանոթ չեն: Այսինքն՝ 20-րդ դ. վերջին-21-րդի սկզբին, ի տարբերություն 19-րդի վերջի-20-րդի սկզբի, հայկական հզոր կապիտալ Թիֆլիսում չձևավորվեց: Հայտնի է, սակայն, որ ազգային փոքրամասնության ֆինանսատնտեսական ակտիվությունը և հզորությունը կարող էին ոչ միայն նպաստել համայնքի ներքին կյանքի աշխուժացմանը, այլև խթանել ազգային վերազարթոնքը:
5. Ակնհայտ է համայնքի ներսում գաղափարական վակուումը, ինչը փորձ է արվում լրացնել առավելապես սպառողական հասարակություններին բնորոշ արժեհամակարգով: Անշուշտ, ժամանակակից աշխարհին հարիր սկզբունքների ընդհանուր ուղղվածությունը և գաղափարական հիմքերը (մարդու իրավունքների գերակայությունը, էթնիկ, կրոնական և այլ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը և այլն) թույլ են տալիս հայկական համայնքի՝ որպես էթնիկ փոքրամասնության, հիմնախնդիրների եթե ոչ լուծումը, ապա գոնե բարձրաձայնումը: Թբիլիսիի հայկական ՀԿ-ների շրջա-

նակներում առկա է այն գիտակցությունը, որ նշված սկզբունքների համատեքստում կարելի է արծարծել հայկական հիմնախնդիրները, որ այդ սկզբունքներն անհրաժեշտ է դիտարկել որպես ռեսուրս և փորձել օգտագործել ազգապահպանման խնդրում: Այստեղ խնդիրն այլ հարթության մեջ է. թե որքանով են Վրաստանի ամենաբարձր ատյանների հռչակած ժողովրդավարական արժեքները գործնականում ընկած իրենց իսկ որոշումների կայացման (ինչպես նաև վրաց հասարակության վարքաբանության) հիմքում: Սա արդեն առանձին հարցադրում է և պահանջում է առանձին քննարկում, քանի որ վերաբերում է Վրաստանի հասարակության զարգացման ընդհանուր միտումներին և տրամաբանությանը: Բայց եթե հետևենք միայն անկախ փորձագետների գնահատականներին, ապա «վարդերի հեղափոխությունն» էապես թուլացրել է երկրի ոչ միայն քաղաքական կուսակցությունները և քաղաքական մրցակցությունը, այլև քաղաքացիական հասարակության առաջին ծիլերը: Հզոր (վրացական ծավալներով) հասարակական կազմակերպությունների առավել ակտիվ անդամները մտան կառավարություն. արդյունքում՝ բացահայտվեց այդ ազդեցիկ ՀԿ-ների **քաղաքական** *(ոչ քաղաքացիական- Թ.Վ.)* **բնույթը**» [13, cc. 52-53]: Այսինքն՝ ներկա զարգացումների տրամաբանությունը մեծ հույսեր չի ներշնչում, թե Վրաստանում կձևավորվի քաղաքացիական հասարակություն, որտեղ էթնիկ փոքրամասնությունների իրավունքները կլինեն լիովին պաշտպանված:

Առաջարկություններ. Անշուշտ, մեր խնդիրն է ոչ միայն ներկայացնել թիֆլիսահայ համայնքի իրավիճակը, վեր հանել անցանկալի զարգացումների պատճառները, այլև մտածել հակազդող ծրագրերի մշակման և իրականացման մասին: **Այս հարցում ՀՀ-ն իր դերակատարումն ունի, ընդ որում՝ ոչ թե կուսակցությունների (ինչն, ի դեպ, բացասաբար է ընկալվում թե՛ վրացական իշխանությունների, թե՛ տեղի հայության կողմից), այլ հասարակական կառույցների միջոցով:** Անշուշտ, հայեցակարգային դրույթները պետք է մշակվեն պետության աջակցությամբ գործող խնդրին ծանոթ փորձագետների կողմից: Բայց իրականացումն, այնուամենայնիվ, պետք է դրվի հասարակական կառույցների վրա:

Դրա համար անհրաժեշտ է.

1. **Վերը նշված հիմնահարցերի քննարկման շարունակականության և արդյունավետության ապահովման համար իրականացնել վրացական հասարակության տրամադրությունների անընդհատ մոնիթորինգ ազգայնական դրսևորումների դինամիկան պատկերացնելու**

համար: Ինչո՞ւ է դա անհրաժեշտ: Խնդիրն այն է, որ այս փուլում վրացական ազգայնականությունն առավելապես (եթե դիտարկենք դեպի ներս ուղղված ազգայնականությունը միայն) ուղղված է հայկականության դեմ: Դրա մասին են վկայում բազմաթիվ հրապարակումներ վրացական (հիմնականում՝ վրացալեզու) տպագիր մամուլում և ինտերնետում[1]: Այսօր որոշ վրացալեզու հրապարակումներում խոսվում է անգամ այն մասին, թե ժամանակն է վերանայել «հայ-վրացական դարավոր բարեկամության առասպելը»: Այս միտումներն ու դրանց դրսևորումները չեն կարող աննկատ մնալ Թբիլիսիի հայկական համայնքի առավել ակտիվ և տեղեկացված հատվածի համար, ինչն էլ լրացուցիչ տագնապի առիթ է ծառայում և նպաստում է հայկական միջավայրի ներքին կայունության խաթարմանը:

2. **Անընդհատ աշխատանքներ տանել հայկական «կողմակների» հետ (ՀԿ-ներ, անհատ ձեռներեցներ, պաշտոնյաներ, աշակերտներ, ուսանողներ, ստեղծագործական մտավորականություն և այլն):** Այս աշխատանքների արդյունավետության համար անհրաժեշտ է խթանել էթնիկ սկզբունքով մասնագիտական միավորումների ստեղծումը (հայ կոշկակարների, վարսահարդարների, մտավորականների և այլն): Դրանք կարող են գործել ՀԿ-ների մասին օրենքի շրջանակներում, ինչը լայն հնարավորություններ է ընձեռում արդյունավետ գործունեություն ծավալելու համար, ընդհուպ մինչև օրենսդրական նախաձեռնություններ, շահերի պաշտպանություն, նաև ապահովում է արտերկրից ֆինանսական հոսքերի համեմատական ազատություն և այլն:
3. **Տեղեկատվական դաշտում հայկական տարրի, հայկական թեմատիկայի ներկայության ապահովում, ինչը հնարավոր է միայն տեղեկատվական ոլորտում հայկական ֆինանսական ներդրումների շնորհիվ:** Անհրաժեշտ է հայեցի դաստիարակության խնդրին մոտենալ՝ հաշվի առնելով այն տեղեկատվական հոսքերը, որոնց հորձանուտում է գտնվում այսօրվա թիֆլիսահայը:
4. **Հայապահպանության ավանդական մեխանիզմները պետք է զուգորդել ժամանակակից՝ «մոդայիկ», հրապուրիչ և երիտասարդության լայն շրջանակների համար առավել ընդունելի և ընկալելի մեթոդներով:** Մեր զրուցակիցներից մեկն ասաց. *«Չենք հիշում, թե վերջին անգամ երբ է մեզ մոտ Հայաստանից մի երգիչ կամ դերասան եկել»* [4]: Շատ կարևոր են հասարակական միջոցառումների կազմակերպումն ու

[1] Օր., «Абхазская война была «грузино-армянской» войной», «Пускай армянская сторона говорит с нами на равных, или же ничего не достигнет», «В Ахалкалаки требуют объявления армянского языка государственным», «Вице-спикер Парламента Армении категорически требует автономии», «В Москве армяне оскорбили Патриарха Грузии» և այլն [14]:

անցկացումը՝ թեմատիկ մրցույթներ, դասընթացներ, փառատոներ, Հայաստան և Արցախ վիրահայ երիտասարդներից կազմված խմբերի այցելություններ, տեղում առաջնորդների ձևավորմանն ուղղված քայլեր, փոխանակման ծրագրեր, հայալեզու լրագրողների պատրաստում, տարբեր զվարճալի միջոցառումներ և այլն: Անհրաժեշտ է ձևավորել այն դաշտը, որտեղ հայապահպանության խնդիրներով մտահոգված կլինի ոչ միայն հայ հասարակության գիտակից և կազմակերպված հատվածը, այլև առավել լայն զանգվածները:

5. **Վրաստանի ներքին շուկայում հայկական կապիտալի ֆինանսատնտեսական ներգրավվածության խթանում:** Պետք է գիտակցել, որ դա ոչ միայն ֆինանսական շահույթ պետք է հետապնդի, այլ նաև, առաջին հերթին, բարոյահոգեբանական լիցքեր հաղորդի հայկական համայնքին:
6. **Հայաստանակենտրոն ռազմավարության մշակում և դրա հիմնական դրույթների վերաբերյալ տեղեկատվության տարածում,** այս համատեքստում հայրենադարձության համար կոնկրետ մեխանիզմների մշակում:

Նոյեմբեր, 2006թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Мурадян П.,* Армянская эпиграфика Грузии, Тбилиси, Ереван, 1988.
2. «Հայ Սփյուռք» հանրագիտարան, Եր., 2003թ.:
3. *Зерубавель Я.,* Динамика коллективной памяти, Ab Imperio, no. 3, 2004.
4. Հարցազրույցներ թիֆլիսահայ համայնքի ներկայացուցիչների հետ («Նորավանք» ԳԿՀ արխիվ):
5. http://www.azg.am/?lang=AM&num=2006060707.
6. http://www.armenia.ge/norashen/norashen_2_arm.pdf.
7. www.armenia.ge
8. Газета «Джорджиан Таймс» от 20-27 июля 2006г., №29 (393), www.armenia.ge.
9. *Андерсон Б.,* Воображаемые сообщества: размышления об истоках и распространении национализма, М., 2001.
10. http://tbilarmtheatre.ge/1100.htm.
11. Հարցազրույց Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Հ.Մովսիսյանի հետ, «Խվալինդելի դղե», թիվ 24, 2006:
12. *Այվազյան Ա.,* Ռազմավարական խոռոչները հայոց քաղաքական գիտակցության մեջ կամ Հայաստանի աշխարհաքաղաքական գոյության աքսիոմները, Գլենդել, 2006:

13. *Долидзе В.,* «Политические партии и партийное строительство в Грузии» // «Центральная Азия и Кавказ», Центр социально-политических исследований, Швеция, 2 (38), 2005.
14. http://www.armenia.ge/georgia/ge_news.php.

АРМЯНСКАЯ ОБЩИНА ТБИЛИСИ: НОВЫЕ ВЫЗОВЫ, СТАРЫЕ ПРОБЛЕМЫ

Тамара Варданян

Резюме

В статье представлены результаты исследования о современном положении армянской общины Тбилиси. Основная источниковая база и методика изучения представленной темы – проведенные в апреле-мае 2006 года полевые исследования, а также газетно-аналитические статьи и некоторые статистические источники. Нашими респондентами были активные члены армянских неправительственных организаций, видные деятели общины и представители армянской интеллигенции Тбилиси.

В статье представлены некоторые, на наш взгляд, объективные и субъективные особенности тбилисской армянской общины, которыми обусловлено нынешнее положение общинной жизни в целом. Автор останавливается на тех элементах, которые важны с точки зрения сохранения этнической идентичности армян, их национального облика, веры и культурных традиций. Отдельно рассматриваются актуальные на данном этапе проблемы в сфере образования, духовного воспитания, информационной политики, «неписанных» правил и бытующих стереотипов, играющих важную роль не только для обеспечения и защиты интересов армянского элемента как этнического меньшинства в Грузии, но и для грузино-армянских межэтнических отношений и установления доверия между ними.

Статья резюмируется некоторыми конкретными предложениями о проведении необходимых мероприятий, целью которых должно быть сохранение и развитие армянства Тбилиси, восстановление еще в недалеком прошлом существующих богатых культурных традиции внутри общины, а также повышение роли и представленности армян в социально-экономической, политической жизни грузинской столицы.